

ՄԱՐԶԻԿ

ՀՄԸՄ

مارزیک

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهولمنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

Հ.Յ.Ս.Ի. 2007, Թի.Ի. 11 (305) VOL. XXVI N° 11 السنة السادسة والعشرون العدد الحادية عشر

ԱԽՈՅԵԱՆՆԵՐԸ



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Յ.Ս.Ը.Ս.Ի Պատգամաւորական 9րդ Ընդհանուր Ժողովէն ընտրուած Յ.Ս.Ը.Ս.Ի Կեդրոնական Վարչութիւնը իր Ա. լիագումարը կայացուց Փարիզի մէջ, 30 Նոյեմբերէն 2 Դեկտեմբեր 2007ին:

Լիագումարը առաջին հերթին իր ներկայացուցիչներուն միջոցով ընդհանուր գիծերու մէջ լսեց շրջաններու մասին զեկուցում մը եւ անդրադարձաւ անոնց դիմագրուած դժուարութիւններուն, ապա՝ կանգ առաւ Պատգամաւորական Ընդհանուր Ժողովի առաջարկ-բանաձեւերուն վրայ, որոնք կրկին մանրամասնօրէն արծարծուեցան եւ յետ ուսումնասիրութեան՝ Կեդրոնական Վարչութիւնը մշակեց իր քառամեայ գործունէութեան (2007-2011) ուղեգիծ-գործելաձեւը:

Ա. ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ

Միութեան ուժեղացումն ու հզօրացումը գօտեպնդելու նպատակով առաջադրուեցաւ հետամուտ ըլլալ, բոլոր բնագաւառներէ ներս, մարդուժի պատրաստութեան, նոյնպէս՝ շրջաններու մէջ գործի հրաւիրել վաստակաւոր քոյր-եղբայրներ, իրենց միջոցով ձեռնարկելու համար կազմաւորման յատուկ սեմինարներու: Ձարկ տալ ցամաքամասային ձեռնարկներու՝ ըլլան անոնք համագումարներ, դասընթացքներ, բանակումներ եւ մարզախաղեր:

Գաղթօճախներէն զանազան պատճառներով հայրենիք վերադարձող հայորդիներու ու յատկապէս Յ.Ս.Ը.Ս.ականներու թիւի աճով եւ Հայաստանի մասնաճիւղերու անդամներու ներկայ թուային պատկերով եւ ընդհանրապէս անոնց ղեկավարման դրութեամբ, շեշտակի անհրաժեշտութիւնը կը դրուի պատրաստել յանձնառու պատասխանատուներ եւ ղեկավարներ, ինչպէս նաեւ վերաշխուժացնել ու վերադասաւորել կառուցային դրութիւնը: Թափ տալ քոյր մասնաճիւղերու գործակցութեան:

Հետամուտ ըլլալ վերջին շրջանին Յ.Ս.Ը.Ս.Ի ընտանիքին վերամիացած եւ կամ նորաստեղծ մեկուսի շրջաններու ներքին կազմակերպական աշխատանքներուն, ինչպէս նաեւ ի պահանջեալ հարկին նոր գաղութներու մէջ Յ.Ս.Ը.Ս.Ի դրօշին ներքեւ վառ պահել հայու դիմագիծն ու դրոշմը:

Հիմնուելով աշխարհի տարածքին տեղի ունեցող կենցաղային պայմաններու փոփոխութիւններուն



2007-2011 քառամեակի Կեդրոնական Վարչութիւնը իր առաջին լիագումարին, Փարիզ:

Ձախէն աջ՝ եղբայրներ Յարութ Յարութիւնեան (Հայաստան), Վահրամ Դանիէլեան (Արեւելեան Ս. Նահանգներ), Կարպիս Գապասագալեան, Գրիգորիս Պողարեան, Միհրան Շիմշիրեան (Լիբանան), Հրաչ Սիսեռեան (Ֆրանսա), Գօգօ Պալեան (Արեւմտեան Ս. Նահանգներ), Արմէն Կէտիկեան (Գանատա) եւ Գարլոս Սէֆէրեան (Հարաւային Ամերիկա):

վրայ եւ ապագայի յստակ տեսլականով, պահանջուեցաւ ճշդորոշել այժմու պահանջներուն յարմարող ութամեայ ռազմավարական ծրագիր մը:

Բ. ՍԿԱՈՒՏԱԿԱՆ

Միութեան ողնասիւնը համարուող սկաուտութիւնը եւ անոր ծամբով յաջորդական սերունդներու դաստիարակութիւնը ապահովելու ու մերօրեայ պահանջներուն եւ յատկապէս յառաջխաղացքներ ձեռք բերելու նպատակով առաջադրուեցաւ Հայաստանի մէջ կայացնել համա-Յ.Ս.Ը.Ս.ական խմբապետական համագումար մը՝ բոլոր շրջաններէն ներս ծրագրելու եւ իրագործելու համար Վկայեալ եւ Արարատեան կարգերը, նոյնպէս խմբաւորումներու խմբապետական կազմերուն յատուկ վերաորակաւորման դասընթացք մը, ինչպէս նաեւ նախորդ փորձառութիւններէն մեկնած ծրագրելու համա-Յ.Ս.Ը.Ս.ական ընդհանուր բանակումը:

Գործունէութեանց յաջող ընթացքին համար յարմար նկատուեցաւ ձեռնարկները իրագործել ցամաքամասային եւ կամ ընդհանուր տարողութեամբ՝ ըստ անոնց բնոյթին:

Յ.Ս.Ը.Ս.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ



ԹԻՒԻՆ ՆԻՒՆԵՐՆ

MARZIG SPORTS MAGAZIN EDITED MONTHLY BY HOMENETMEN
 ماززیک مجله ریاضية شهریه تصددها جمعیه الیومتمن الریاضی




Մարզական ամսաթերթ
 Հրատարակություն՝ Հ.Մ.Ը.Մ.ի
 ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ
 ԻՉ. ՏԱՐԻ, 2007, ԹԻ 11 (305)



14

Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԿԵԱՆՔ

- Խմբագրական 2
- Անդրադարձ 3
- Ոգեկոչումի Խօսք 5
- Ակնարկ 6
- Տարեդարձ 7
- Մասնաձիղէ Մասնաձիղ 9



18

ՐԱԺԻՆՆԵՐ

- Մանկապատանեկան 38
- Տարբեր Հայեացքով 40



28

ՎՐԻՊԱԿ
 «Մարզիկ»ի անցեալ թիւի
 խաչքառին թիւը
 պէտք էր ըլլար 164:

ԽՄԲԱԳԻՐ
 Վիգէն Աւագեան
 ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՍ
 Սեդա Պէշեան
 Սեւան Նազարեան
 «ՄԱՐԶԻԿ»Ի ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲ
 Արօ Մոսիկեան
 Գօգօ Սկրտիչեան
 Վահան Համամձեան
 Տիրան Շահինեան
 Սալբի Ճէճէեան
 Վահէ Թանաշեան

ԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՆԻՆ
 Սամուէլ Սկրտիչեան, Յակոբ
 Քէշիշեան, Վահէ Թանաշեան,
 Սալբի Լատոյեան եւ
 շրջաններու թղթակիցներ:

Էջադրում - Ջարեհ Չէօրքճեան
 Գրաշարութիւն - Վերա Բարսեղեան
 Colour Separation - Photogravure Paklayan
 Կողքի Ձեւաւորում Տպագրութիւն



ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԷ
 Պուրճ Համուտ, Ճինիշեանի Թաղ
 «Սեւան» Շէնք, Գ. Յարկ
 Հեռ: 01/248043, Fax: 01/260117
 E-mail: marzig@homenetmen.org
 P.O. Box: 80486 B. Hammoud, Lebanon

ՑՐԻՈՒՄ

Լիբանանի մէջ թերթին
 հատավաճառի սակն է 3000 Լ.ո.:
 Տարեկան բաժանորդագրութեան սակ
 ճշդուած է 35000 Լ.ո.:
 Լիբանանէն դուրս թերթին
 բաժանորդագրութիւնը
 կը կատարեն Հ.Մ.Ը.Մ.ի Մեկուսի
 եւ Շրջանային Վարչութիւնները:
 Թերթը ուղղակի Լիբանանէն
 կը ստացուի անձնական
 բաժանորդագրութեամբ
 (Տարեկան սակ՝ Միջին Արեւելեան
 եւ Եւրոպական երկիրներ \$50,
 Ամերիկա եւ Աւստրալիա՝ \$55):



ՄԿԿԿ

«ՀԵՏՌ ՊԻՏԻ ՉՏԱՆԻՍ...»

Ժողովրդային հիմն ու խորիմաստ խօսք մը կ'ըսէ. «Յետո պիտի չտանիս...»:

Այս աշխարհի փառքն ու հարստութիւնները կը պատկանին ա՛յս աշխարհին: Մարդ որքան ալ բարձր դիրքերու հասնի, գործի յաջողութիւններ ունենայ եւ հարստութիւններ դիզէ, ի վերջոյ պիտի մեռնի եւ անդենական մեկնի՝ մերկ ու մինակ, ճիշդ այնպէս ինչպէս որ ծնած էր:

Կ'արժէ իսկապէս, որ ամէն մարդ, օրւան վազվզուքէն, հեւքոտ աշխատանքէն, կիրքերէն ու վէճերէն պահ մը վեր բարձրանալով՝ երբեմն-երբեմն մտածէ մարդկային հասարակաց ճակատագրին մասին, որ կը միանայ մահուան մէջ: Լաւագոյն դասն ու դաստիարակութիւնը կ'ընծայէ այս վարժութիւնը: Եսպաշտ ախորժակները, ընչաքաղց ցանկութիւնները, անսանձ կիրքերը եւ նիւթին ստրկական գերութիւնը մոռնալու զխաւոր միջոցն է ասիկա:

Եթէ չքաւորը ինքն իրեն հաշիւ տայ, թէ ի՞նչ պիտի տանի հետը այս աշխարհէն, իր չքաւորութեան դառնութիւնը նուազ պիտի ծնշէ հոգիին վրայ: Ան աւելի թեթեւ ու մխիթարուած պիտի զգայ ինքզինք եւ պիտի գիտնայ երջանիկ ըլլալ իր քիչով:

Եթէ մեծահարուստը խորհի թէ նոյն փոսին կը դիմեն բոլոր կեանքերն ալ, եւ թէ կարելի չէ որեւէ բան տանիլ հոն, բացի անկենդան մարմինէն, այդ պարագային շատ աւելի գթասիրտ եւ կարեկից պիտի դառնայ իր նմաններուն հանդէպ: Ինքզինք հաւասար պիտի ըզգայ անոնց:

Շատ հաճոյքներ, նիւթական բազմաթիւ վայելքներ, դրամին կապուած փորձութիւններ, որոնց համար սիրտ ու կեանք կը մաշեցնենք ընդհանրապէս, այս մօտեցումով անիմաստ ու անարժէք պիտի թուին մեզի կամ՝ պիտի ստանան անցաւոր հաճոյքի իրենց բուն ար-

ժէքը, իրական տեղը: Երջանկութիւնը այն ատեն պիտի փնտռենք ուրի՛շ տեղ, հոգեկան ու մտային ապրումներու մէջ:

Ժողովուրդը երկու բառով ըսած է արդէն ամէն բան.- «Յետո պիտի չտանիս...»:

Իմաստասէրները, գիտուններն ու բանաստեղծները, որոնք կրնան առօրեայէն վեր բարձրանալ եւ աշխարհին բարձունքներէ նայիլ, շատ աւելին ըսած են, շա՛տ աւելի գեղեցիկ ծելով.

«Մահը մերն է մենք մահինը, Մարդու գործն է միշտ անմահ»:

Ամէն բան կ'անցնի. առոյգ հասակները կը կքին, ծռած մէջքերը կը փշրին ու հող կը դառնան ի վերջոյ, բայց մարդու մը գործը կը մնայ անմահ, եթէ սովորական, հասարակ, աննշան գործ մը չէ: Եթէ բարիք կամ գեղեցկութիւն կը ճառագայթէ շրջապատին վրայ: Ու եթէ իր մէջ ծշմարտութեան եւ կեանքի ուժը կը խտացնէ:

«Անմահ գործեր»ու շարքին կը դասուին այն բոլոր արարքները, որոնք եսասիրութեան նեղ սահմաններէն դուրս կու գան, անձնուիրութեան ձեւ կը ստանան եւ ուրիշներուն կը զոհաբերուին:

Իսկ զոհաբերուելու զանազան ձեւեր կան. մէկը կրնայ իր դրամը ի սպաս դնել հանրօգուտ ձեռնարկներու եւ անմահանալ: Շինել դպրոց, եկեղեցի, ակումբ, հովանաւորել մարզական խումբեր, պահել սաներ, հրատարակել գիրքեր եւ այլն: Մէկ խօսքով անմահ նպատակներու գործածել այն նիւթը, որ հետը պիտի չտանի: Ուրիշ մը կրնայ իր ուժերը, ժամանակը եւ կեանքը նուիրել ժողովուրդին, անոր պահպանման, զարգացման ու բարգաւաճման: Այս ալ անմահութեան կտակած կ'ըլլայ այն բոլորը, զորս հետը պիտի չտանի:

Կարելորը այն է, որ մեզմէ իւրաքանչիւրը տարին գէթ մէկ անգամ յիշէ, թէ... հետը բան պիտի չտանի:

ՀԱՅԱԿԵՐՏՈՒՄԻ ՆՈՐ ԿՌՈՒԱՆ

Սամուել Սկրտիչեան
ԿԼԵՆՏԷՅԼ

Աչքը լույս Հ.Մ.Ը.Մ.ականներուն:

2007 թուականը Հ.Մ.Ը.Մ.ի Արեւմտեան Մ. Նահանգներու շրջանին համար եղաւ իրագործումի, յաղթանակի եւ ուրախութեան տարի: Քանի,

2007ին, Շրջանային Վարչութեան մէկ խիզախ որոշումով, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքը ունեցաւ իր բանակավայրը՝ իր նոր տունը, հոգեկան նոր բոյնը: Մինչ Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտութիւնը հասաւ իր տարիներու երազին՝ իր բանակավայրին: 25 էքքըր [շուրջ 100 հազար քառ. մետր- «Մ.»] տարածութեամբ անտառ մը՝ մեծ ու մեծղի բանակավայր մը, իր բոլոր կառուցներով, իր բոլոր իրերով ու յարմարութիւններով եկաւ ծառայելու Հ.Մ.Ը.Մ.ի հայակերտումի, մարդակերտումի աշխատանքներուն: Յոյսի, լոյսի նոր կռուան մը, հաւատքի նոր փարոս մը եկաւ նոր աւիւն, նոր յոյս ներշնչելու Հ.Մ.Ը.Մ.ի ազգանուէր գործունէութեան՝ հայր հայ պահելու աննահանջ պայքարին:

Աչքը լույս Հ.Մ.Ը.Մ.ականներուն: Գայլիկ, գա՛րկ թմբուկին, այսօր տօն է Հ.Մ.Ը.Մ.ի ուրախութեան:

Հ.Մ.Ը.Մ.ի պատմութեան մէջ աննախընթաց եւ իմաստալի սխրանք մը (785 հազար տորարի արժողութեամբ) եկաւ ճո-



խացնելու, հարստացնելու Հ.Մ.Ը.Մ.ի փառաւոր պատմութիւնը: Գնահատելի էր Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Վարչութեան եւ իրագործումը, եւ նպատակը: Յոյսով ենք, որ այս շինիչ ու նուիրական նպատակին կը յաջողեն նոյնքան կարեւոր եւ անհրաժեշտ նոր քայլեր, նոր կառուցներ, որոնք պիտի գան աւելի զօրացնելու եւ խրախուսելու Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը՝ հայակերտումի սրբազան հաւատամքը: Որովհետեւ մենք՝ հայ ժողովուրդի զաւակները կ'ապրինք օտար ճամբաներու վրայ: Մեր զաւակները կը մեծնան օտար բարքերու մէջ: Մեր շուրջը ամէն բան օտար է ու խորթ: Ուստի, կեանքի այս պայմաններուն մէջ մենք հայ սերունդ կերտելու հրամայականին դիմաց կը գտնուինք: Քանի այսօր հին օրերը անցած են, հա-



Պատասխանատու խումբ մը եղբայրներ բանակավայր այցելութեան ընթացքին

յակերտումի հին միջոցները հինցած են: Իսկ մենք՝ ձուլումի աւելի սուր, աւելի վտանգաւոր պայմաններու առջեւ կը գտնուինք: Բայց մենք վճռած ենք հայօրէն ապրիլ: Մենք վճռած ենք մեր գաւազները հայօրէն մեծցնել: Մենք վճռած ենք, կեանքի պայմանները ինչ ալ ըլլան, հայ մնալ, որովհետեւ մենք չենք մոռցած մեր մէկ ու կէս միլիոն նահատակներուն արեան կանչը: Մենք չենք մոռցած մեր պապենական հողն ու ջուրը, որոնք կը կոտտան թուրքին ճիրաններուն մէջ: Մենք հողի, արեան պահանջ ունինք: Ուստի,

Ինչպէս տուն մը, երդիք մը որ անհրաժեշտ են՝ ընտանիքի մը պատասպարման, մեծնալուն եւ բազմանալուն համար, նոյնպէս ակումբ մը, դաշտ մը, բանակավայր մը թէ մարզական խաղավայր մը անհրաժեշտ են՝ սկստակական մեր աշխատանքներուն զարգացման, թեթեւ աթլէթի մարզումին, մեր պապէթի նորանոր խոյանքներուն, ֆուլթպոլի փորձերուն համար, որոնք ազնիւ, օգտակար միջոցներ են՝ պարման-պարմանուհին հեռու պահելու այլազան աւերիչ բարքերէ: Նաեւ,

Այս ազնիւ, գեղեցիկ կերտիչ միջոցներէն մէկն է Հ.Մ.Ը.Մ.ի բանակավայրը, որուն շնորհիւ այսօր անվարան կրնանք ըսել, որ մեր սկստակական կազմերը, մեր մարզական խաղերը, մեր հայկերտումի աշխատանքը, մէկ խօսքով մեր խաղն ու տաղը, մեր կամքը առաւել թափով, առաւել նուիրումով պիտի լծուին հայր հայ պահելու, հայր հայ մեծցնելու սրբազան աշխատանքին: Այսօր մեր նուիրումին, մեր հա-

ւատքին բերքը պիտի ըլլայ առաւել բեղուն, առաւել արդիւնաւէտ: Մեր երզն ու խաղը, մեր տաղը պիտի ըլլան առաւել անոյշ, առաւել գրաւիչ: Որովհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի նորակերտ բանակավայրը պիտի ըլլայ մտերմիկ հաւաքավայր մը, ջերմիկ օճախ մը, ուր մեր գաւազները, մեր սկստակական կազմերը, մեր մարզիկները պիտի գան հոգեկան սնունդ առնելու, ազգային աւելն ներշնչելու: Իսկ Հ.Մ.Ը.Մ.ի բանակավայրին դուռը լայնօրէն բաց պիտի ըլլայ հայ ազգի բոլոր գաւազներուն առջեւ: Թող գան, մեծ թէ պզտիկ թող գան հոն՝ Հ.Մ.Ը.Մ.ի բանակավայրը՝ հայօրէն ապրելու, հայօրէն խօսելու, հայօրէն զգալու: Հոն՝ Հ.Մ.Ը.Մ.ի բանակավայրը պիտի ծառայէ հայր հայուն ծանօթացնելու, հայր հայուն եղբայր կոչելու, հայր հայով զօրանալու:

Կեանքի այս դաժան պայքարին դիմաց, հայր հայ պահելու այս կռուանին առջեւ, Հ.Մ.Ը.Մ. պատրաստ է ամէն նուիրումի, ամէն զոհողութեան, որովհետեւ Հ.Մ.Ը.Մ. ծնած է այս պայքարին համար՝ հայր հայ պահելու առաքելութեան համար: Եւ մենք ուրախ պիտի ըլլանք, շնորհակալ պիտի ըլլանք, եթէ հայ մարդիկ ընդառաջեն մեր երթին, մեր խնդրանքին, հայակերտումի մեր առաքելութեան:

Իսկ դուն՝ Թիքոյա, հնդիկներու սրբազան օրօրան, հայութեան նոր բարեկամ, օրհնեալ երգ ըլլաս, բարեկամութեան օրհներգ ըլլաս հայ ցեղին թափառական գաւազներուն համար:



- Full of Charme Hotel, New Construction, French Architecture, International Standards, 100 m from the Republic Square and 15 minutes from the Yerevan International Airport.
- 44 Rooms and 3 Suites with all comforts, all climate controled, minibar, shower or bathroom with private WC, hairdryer. Satellite TV, international direct dial phone. Internet & Email access.
- Individualized and personal service, 24 hour reception and room service
- Bar



Feel at home, away from home...

Reservations **Yerevan**
 32-38, Hanrabadoutian Street,
 Yerevan 375010, Armenia
 Tel 374 10 54 60 60 • Fax 374 10 54 60 50
 sales@europahotel.am

www.europahotel.am

StudioVCCEN 2005, RAIS

ԻՆՉՊԷՍ ՄՈՌՆԱԿ

Տարեկան իր աւանդութեան համաձայն, Կիրակի, 11 Նոյեմբեր 2007ին, Գ.Ս.Ը.Ս.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը Պէրլուքի Ս. Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ կազմակերպեց Գ.Ս.Ը.Ս.ի հին ու նոր ննջեցեալներու յիշատակին հոգեհանգստեան պաշտօն, որմէ ետք՝ Ազգային Առաջնորդարանի դահլիճին մէջ ընդունեց Գ.Ս.Ը.Ս.ականներու եւ համակիրներու ցաւակցութիւնները: Այս առիթով, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան Առաջնորդարանի դահլիճին մէջ արտասանեց ոգեկոչումի խօսք մը, զոր կը ներկայացնենք ստորեւ:

Մենք կը հաւատանք մեզմէ անվերադարձ բաժնուողներուն յարգանքի տուրք տալու աւանդութեան եւ այսօրը «Օր» ճշդած ենք այդ աւանդին հաւատարիմ ննջեցեալ բոլոր Հ.Ս.Ը.Ս.ականներուն, ըլլան անոնք ըսկառտ, մարզիկ թէ վարչական գործունէութիւն տարած անդամ-անդամուհիներ:

Անոնք՝ անցեալին մէջ գործած անմահները, համոզուած ըլլալով Հ.Ս.Ը.Ս.ի վեհ գաղափարին, գործեցին ու անցան: Տուին անհաշիւ, տուին առանց սակարկելու, եւ նուիրուեցան մինչեւ իրենց վերջին շունչը՝ ի նպաստ միութեան վսեմ գաղափարին եւ անոր անզուգական նշանաբանին:

Իրերայաջորդ սերունդներու զաւակներ տասնեակ տարիներու իրենց վաստակը ունեցան Հ.Ս.Ը.Ս.ի վերելքին ու զարգացման մէջ, որ բազմանալով ու ծլարձակելով, աշխարհի տարածքին եղաւ 99 ճիւղերով հաստարուն ծառ մը:

Ի՞նչպէս կարելի է մոռնալ յիշատակը այն մարզիկներուն, որոնք երկար տարիներ քրտինք թափեցին դաշտերու վրայ՝ բարձր պահելու համար միութեան դրօշը:

Ի՞նչպէս կարելի է չիշել այն վարչականները, որոնք զրկուելով անձնական հաճոյքներէն եւ նոյնիսկ իրենց հարազատ ընտանիքէն, ամիսներ ու տարիներ տրամադրեցին ծրագրելու եւ իրագործելու համար լաւագոյնը՝ ի նպաստ իրենց մասնաճիւղին կամ միութեան շահերուն:

Ի՞նչպէս մոռնալ կակուղ-թաթիկէն մինչեւ շեփորախումբերու անդամներն ու սկառտական բարձրագոյն դիրքերու վրայ գործած քոյր-եղբայրներն ու պատասխանատուները, որոնք օր մը հպարտօրէն տողանցեցին հայկական թաղերու եւ մարզադաշտերու մէջ եւ կամ սկառտական այբուբենը սորվեցուցին նորեկներուն՝ անշահախնդիր մօտեցումով:

Ի՞նչպէս կարելի է մոռնալ զանոնք:

Այո՛, ի՞նչպէս մոռնալ այն Հ.Ս.Ը.Ս.ականը, որ մահուան սնարին մէջ իսկ կը հետաքրքրուի Հ.Ս.Ը.Ս.ի մարզական լուրերով, կամ այն մարզիկը, որ հեծանիւր մէկ կողմ դնելով, կ'երթայ նահատակուելու Ղարաբաղեան լեռներուն վրայ:

Այս բոլորը պարտք կը զնեն մեր վրայ, որ ոգեկոչենք յիշատակը բոլոր անոնց, որոնք նուիրուեցան Հ.Ս.Ը.Ս.ին ու գործեցին Հ.Ս.Ը.Ս.ին համար:

Այո՛ պարտաւոր ենք երէկուան գործողներուն յիշատակը ստուերի մէջ չձգել:

Խունկ ու մոմ մեզմէ յաւէտ բաժնուած Հ.Ս.Ը.Ս.ականներու անմահ յիշատակին:

ԴԱԲԻԹ ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ Հ.Ս.Ը.Ս.Ի ՊՈՒԲՆՈՍ ԱՅՐԷՍԻ ԱԿՈՒՄԲ

Թենիսի միջազգային աստղ, արժանաբիւնահայ թենիսիստ Դաւիթ Նալպանտեան վերջերս այցելեց Գ.Ս.Ը.Ս.ի Պուլնոս Այրեսի ակումբ, ուր դիմաւորուեցաւ իր ազգակիցներուն եւ երբեմնի բարեկամներուն կողմէ:



Ծանօթ է, որ Նալպանտեան թենիսի իր առաջին քայլերը առած է Գ.Ս.Ը.Ս.ի շարքերուն մէջ, ուր մինչեւ օրս ունի բազմաթիւ ծանօթներ:

Նալպանտեանը Գ.Ս.Ը.Ս.ի ակումբին մէջ դիմաւորեցին Արժանաբիւնի մօտ Հայաստանի դեսպանը, հայ եկեղեցւոյ ներկայացուցիչները, Գ.Ս.Ը.Ս.ի Պուլնոս Այրեսի ակումբին պատասխանատուները, գրեթէ բոլոր տարիքի թենիսի մրցաշարքերու մասնակցողներ եւ մեծ թիւով Գ.Ս.Ը.Ս.ականներ:

Հայաստանի դեսպանը այս առիթով Նալպանտեանը հրաւիրեց Երեւանի մէջ տեղի ունենալիք թենիսի միջազգային մրցաշարքին: Ան ըսաւ, որ մրցաշարքին Նալպանտեանի մասնակցութիւնը պիտի տայ յաւելեալ փայլք:

Նալպանտեան հրաւիրը ընդունելով ըսաւ. «Շատ հաւանական է, որ մօտիկ ապագային Երեւանի մէջ տեղի ունենալիք մրցաշարքին մասնակցութիւնս բերեմ: Երբեք չեմ կրնար մոռնալ անցեալի այն օրերը, երբ թենիսի մրցումներ կը կատարէի Գ.Ս.Ը.Ս.ական եղբայրներուս հետ»:

ՀԱՒԱՔԱԿԱՆ ՃԻԳԵՐՈՒ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

Վահե Թանաշեան ՄԵՐԻԼԵՏ

Իր հիմնադրութեան 90ամեակի նախօրեակին, 26 հազար անդամ հաշուող եւ 99 մասնաճիւղ ունեցող Հ.Մ.Ը.Մ.ը Արեւելեան Միացեալ Նահանգներու մէջ այսօր ունի 10 մասնաճիւղ եւ աւելի քան 1200 անդամ: Հ.Մ.Ը.Մ. մեծագոյն միութիւնն է նաեւ Արեւելեան Միացեալ Նահանգներու մէջ, ուր իր հզօրութիւնը կը պարտի գաղափարաբանութեան հիմնական չորս յատկանիշներուն.- իր ազգային դիմագիծին, Հ.Մ.Ը.Մ.ի հոմանիշ դարձած բարոյականութեան, անդամներուն միջեւ տիրող ջերմ եղբայրասիրութեան եւ միութենական կարգապահութեան: Այս չորս յատկութիւնները կը հանդիսանան Հ.Մ.Ը.Մ.ի ուժին աղբիւրը եւ անոնց մէջ կը խտանայ միութեան յառաջդիմութեան գաղանիքը: Հետեւաբար, այս գաղափարաբանութեան պահպանումով կարելի պիտի ըլլայ նուաճել նորանոր յաջողութիւններ եւ երաշխաւորել Հ.Մ.Ը.Մ.ի նպատակին իրականացումը:

Հ.Մ.Ը.Մ.ը պատահականօրէն կազմուած միութիւն մը չեղաւ, այլ՝ ծնաւ Մայիս 28ի բախտաբեր երկունքէն, նշանաբան ընտրելով «Բարձրացիր-բարձրացուր»ը: Անոր գերագոյն նպատակը եղաւ պատրաստել ֆիզիքսայէս եւ բարոյապէս առողջ երիտասարդութիւն, պարտաճանաչ քաղաքացիներ եւ մանաւանդ՝ հայեցի դաստիարակութեամբ թրծուած սերունդ: Հ.Մ.Ը.Մ.ը սկստուած էր, Ֆուլթոնի, վոլիպոլի, պասթեթպոլի կամ այլ մարզաձեւերու սոսկական համախընդհանրում մը չէ, այլ՝ Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւնն է, որ կը ձգտի ազգային վսեմ նպատակներու, որոնց իրագործման համար միջոց որդեգրած է սկստական շարժումը եւ մարմնամարզը:

Այսօր, միջազգային սկստութեան հիմնադրութենէն 100 եւ հայ սկստութեան ստեղծումէն 95 տարի ետք, աշխարհի չորս ծագերուն հայ սկստութիւնը կը շարունակէ ներգրաւել մանուկներ եւ պատանիներ: Մարզանքը իր գանազան ձեւերով կը շարունակէ մնալ դաշտային ամէնէն հետաքրքրական խաղը: Հետեւաբար, մեր հիմնադիրներուն պատկերացումը՝ սկստութիւնը եւ մարզանքը ընտրել միջոցներ, իրագործելու համար միութեան վսեմ նպատակը, փաստօրէն տուած է իր պտուղը, որուն շնորհիւ այսօր կա՛յ ու կը գործէ Հ.Մ.Ը.Մ.ը:

Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանին մէջ Հ.Մ.Ը.Մ.ը հիմնական դժուարութիւն չունի նոր սերունդները ներգրաւելու իր շարքերէն ներս: Շատեր սկստութեան, ֆուլթոլի, վոլիպոլի, պասթեթպոլի կամ այլ մարզաձեւերու սիրոյն, երբեմն ալ Հ.Մ.Ը.Մ.ական ծնողներու քաջախիտութեամբ կը միանան Հ.Մ.Ը.Մ.ին: Հ.Մ.Ը.Մ.ի հիմնական դժուարութիւնը, սակայն, կը կայանայ վերոյիշեալ գաղափարաբանութեան դաստիարակութեան եւ ընկալումին մէջ: Իսկ այս դժուարութեան աղբիւրը մատուցող սերունդները չեն միայն, ո՛չ ալ՝ միութեան ղեկավարութիւնը ստանձնած վարչականները, խմբապետները կամ մարզիչներն են: Այս դժուարութեանց տուն տուող գանազան պատճառներ կան, որոնք կարելի է ամփոփել հետեւեալ կէտերու մէջ.-

1. Շատեր լաւ չեն ըմբռնած միութեան գաղափարաբանութեան վերոյիշեալ էութիւնը եւ իրենց քով միջոց դարձած է նպատակ, հետեւաբար մարզական մրցումէ մը յաղթական դուրս գալը կը գերազանցէ գաղափարական որեւէ սկզբունք:
2. Դաստիարակչական ծրագիրներու պակասը մեծապէս կը նպաստէ առաջին դժուարութեան:
3. Մարզուծի պակասը ղեկավար մարմիններուն կը ստիպէ գրադիլ ընթացիկ աշխատանքներով, որոնց հետեւանքով լուսանցքի մէջ կը մնայ դաստիարակչական հիմնական աշխատանքը:
4. Լեզուի հարցը, իր կարգին, կը դժուարացնէ դաստիարակչական աշխատանքը: Այսպէս, Հ.Մ.Ը.Մ.ի գաղափարաբանութեան քաջածանօթները դժուարութիւն ունին անգլերէնով դասախօսելու, հետեւաբար հայերէնով դասախօսութիւնները երբեմն կը դառնան ճանճրոյթի պահեր:

Մեզ շրջապատող միջավայրէն եկած վերոնշեալ դժուարութիւնները յաղթահարելը առանձին միութեան մը ուժերէն վեր է: Անոնք կրնան յաղթահարուիլ միայն միութիւն, ընտանիք, դպրոց եւ եկեղեցի քառանկիւնին հաւաքական ճիգերով:

USUSԱՆՔ

ՄՈՎԼԻ

Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՅԼԿԿԻՆ ՊԱՐԲԵՐԱԹԵՐՈՅ

ՀՐԱՄԱՅԱԿՈՒԹԵԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԵՈՅ
ՇՐՁ. ՍԿԱՌՏ. ԽՈՐՀՈՒՐԳԻ, ՀԱԼԷՄ, 2007:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԾՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30ԱՄԵԱԿԸ



1977. Ծրջանի Ա. Ներկայացուցչական ժողովին մասնակիցներու յիշատակի նկար:

այլ մարզախաղերու խումբեր: Դժբախտաբար, խանդավառութեան այլքը երկար չի տեւեր եւ մասնաճիւղը 1934ին կը լուծուի: Այսպէս, միայն Մասաչուսէցի մէջ չէ, այլ՝ երեսունական թուականներուն, յատկապէս Միացեալ Նահանգներու տնտեսական դժուարին օրերուն, բոլոր մասնաճիւղերը կը տկարանան եւ գրեթէ կը կազմալուծուին: Գրեթէ քսան տարի ետք, այս անգամ Միչիկընի մէջ կը վերսկսին Հ.Մ.Ը.Մ.ական աշխատանքներ: Արդարեւ, Տիթթոյթի մէջ քանի

է եւ կը կարծուի թէ երեսուն տարին եր առաջ հիմնուած է Արեւելեան Միացեալ Նահանգներու Հ.Մ.Ը.Մ.ի շրջանը, սակայն նախապէս քանի մը լուրջ աշխատանքներ կատարուած են շրջանին մէջ:

Այսպէս, 1920ական թուականներու աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղեր կազմուած են Արեւելեան Միացեալ Նահանգներու զանազան քաղաքներուն մէջ. Պոսթըրն, Փրոյվիտընս, Հարթֆըրտ եւ Ֆիլատելֆիա: Մասնաճիւղերու այս ցանցով կը ստեղծուի Կեդրոնական Վարչութիւն մը, որ կը սկսի կազմակերպել միջ-մասնաճիւղային խաղեր:

Յատկապէս Մեծն Պոսթըրնի մէջ, Հ.Մ.Ը.Մ.ական շարժումը կը սկսի 1932ի ամրան, երբ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադիրներէն Տիգրան Քհնյ. Խոյեան, ընդառաջելով գաղութի երիտասարդութեան խնդրանքին, եւ խորհրդակցելէ ետք «Հայրենիք»ի օրւան խմբագիր՝ Ռ. Դարբինեանի հետ, կը հիմնէ շրջանի Հ.Մ.Ը.Մ.ը: Գործունէութիւնը կ'ըլլայ բեղուն: Կը կատարուի երգման արարողութիւն, մասնակցութեամբ վաթսուն քոյր-եղբայրներու, ներկայութեամբ նոյնինքն հիմնադիր Տիգրան Քհնյ. Խոյեանի եւ մասնաճիւղի հիմնադիրներէն Մայքըլ Յարութիւնեանի, Մաքսուտ Անանիկեանի, Յակոբ Թէվէքէյեանի: Կը տրուի յատուկ պատգամ: Տեղի կ'ունենայ մասնաճիւղի անդրանիկ վարչութեան ընտրութիւն: Նորընտիր վարչութեան ջանքերով կը կազմուին պասքեթպոլի, ֆուտպոլի եւ

մը տարի կը կատարուի հետեւողական աշխատանք: Հոս ալ երկար չի տեւեր գործունէութիւնը եւ անգամ մը եւս աշխատանքները կը դադրին:

Միայն եօթանասունականներուն է, որ Հ.Մ.Ը.Մ.ը կը սկսի վերաշխուժանալ եւ վերակազմուիլ: 1970ի դարնան, Ուաշինկթընի մէջ, խումբ մը երիտասարդներու հաւաքի մը ընթացքին, շրջանի Հ.Յ.Դաշնակցութեան նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ, կը հիմնուի տեղոյն Հ.Մ.Ը.Մ.ի մասնաճիւղը: Ութսունականներուն, աւելի մեծ թափով կը շարունակուին աշխատանքները: Մարզական գործունէութեան կողքին կը կազմակերպուի սկստական շարժում: 1984ին, Ուաշինկթընի մասնաճիւղը կը հիւրընկալէ ձմեռնային ողիմպիական մարզական խաղեր, որոնք կը պսակուին մեծ յաջողութեամբ: Յարգ գործունէութիւնը կը շարունակուի: Միջ-մասնաճիւղային խաղերու կողքին, շրջանը 1997ին կը կազմակերպէ համա-Հ.Մ.Ը.Մ.ական խաղեր:

Եօթանասունականներուն զգալի խանդավառութիւն մը կ'ապրի նաեւ Պոսթըրնը: Արդարեւ, «Արմէնզ» ֆուտպոլի խումբը հազիւ կազմուած եւ հռչակի տիրացած, կը միանայ Հ.Մ.Ը.Մ.ին, որ իր ժողովը կը կատարէ 17 Հոկտեմբեր 1973ին, Սուրբ Ստեփանոս եկեղեցւոյ ներքնասրահին մէջ: Այս կարեւոր եւ պատմական ժողովին ներկայ կը գտնուի Հ.Մ.Ը.Մ.ի Մերձաւոր Արեւելքի Ծրջանային Վարչութեան

ատենապետ եղբ. Յովհաննէս Շահինեան: Քանի մը ամիս ետք տեղի կ'ունենայ երգման արարողութիւն, ներկայութեամբ թեմի Առաջնորդ՝ Գարեգին Եպս. Սարգիսեանի (հետագային Մեծի Տանն Կիլիկիոյ եւ ապա՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս):

1975էն ետք, Հ.Մ.Ը.Մ-ի Պոսթընի մասնաճիւղը կ'օժտուի սկաուտական շարժումով: Մինչեւ օրս, շարժումը կը տանի բեղուն գործունէութիւն: Անդամներուն թիւը երկու հարիւրի շուրջ է եւ մարզական զանազան խումբեր իրենց մասնակցութիւնը կը բերեն շրջանային զանազան մրցաշարքերու:

Հ.Մ.Ը.Մ-ի Նիւ Եորքի մասնաճիւղը վերակազմուեցաւ 1977ին...աւելի քան յիսուն տարի առաջ հիմնուելէ ետք: Արդարեւ, 1921ին կազմուած էր մասնաճիւղը, որ յաջողած էր կազմակերպել ռազմական միջ-մասնաճիւղային խաղեր, հրաւիրելով Պոսթընն ու Նիւ Ճորջին:

Սկաուտութենէ աւելի մարզական խաղերով Նիւ Եորքի շրջանը արձանագրած է յաջողութիւններ: Պասքեթպոլի, ֆութպոլի եւ յատկապէս աղջկանց վոլիպոլի մրցումներուն մասնաճիւղը արձանագրած է յաջողութիւններ: Գրեթէ միեւնոյն տարիներուն, հազիւ քանի մը ամիս ետք, կը հիմնուի Հ.Մ.Ը.Մ-ի Նիւ Ճորջիի մասնաճիւղը: Սկաուտական շարժումէն թէ մարզական կեանքէն ներս, Հ.Մ.Ը.Մ-ի Նիւ Ճորջիի մասնաճիւղը կը նկատուի Արեւելեան շրջանի գլխաւոր սիւներէն մէկը:

Յիսունականներուն տարիներուն հիմնուելէ ետք, 1976ին

կը վերակազմուի Հ.Մ.Ը.Մ-ի Տիթրոյթի մասնաճիւղը: Հազիւ քսանհինգ անդամներէ կազմուած, այսօր մասնաճիւղը կը հաշուէ հարիւր քսանհինգ անդամ: Մասնաճիւղը ունի պասքեթպոլի եւ վոլիպոլի երկսեռ խումբեր: Բոլոր կազմերն ալ կը մասնակցին զանազան մրցաշարքերու: Վերջերս, Տիթրոյթի մէջ տեղի ունեցան շրջանի միջ-մասնաճիւղային խաղերը:

1976ի Յուլիս 24ին կը հիմնուի Հ.Մ.Ը.Մ-ի Շիքակոյի մասնաճիւղը: Իր հիմնադրութեան օրերուն երեսուն անդամներով եւ քառասուն սկաուտներով, այսօր մասնաճիւղը կը շարունակէ իր գործունէութիւնը, միութեան դրօշը բարձր ծածանելով...«հովերու քաղաք»ին մէջ:

Հ.Մ.Ը.Մ-ի Ֆլորիտայի մասնաճիւղը կը հիմնուի 1981ին, խումբ մը ազգասէր եւ հայրենասէր հայորդիներու կողմէ: Մեծ ապագայ կը խոստանայ այս շրջանի Հ.Մ.Ը.Մ-ը, տրուած ըլլալով որ մեծ թիւով հայեր բնակուած են հաստատած են զանազան քաղաքներու մէջ:

Շրջանի նորագոյն մասնաճիւղերէն մէկը կը նկատուի Ալպընիի Հ.Մ.Ը.Մ-ի մասնաճիւղը, որ հիմնուած է 1986ին, Սուրբ Խաչ եկեղեցւոյ սրահին մէջ: Մասնաճիւղը կարողացած է իր շուրջ համախմբել գաղութին երիտասարդութիւնը:

Made from one single slice of natural Australian opal

Classique®

OPAL DIAL WATCH

Sarkis Der Bedrossian

*Sams Watchmaker Jeweller Pty. Ltd.
123 Clarence Street
Sydney 2000
Australia*

Phone: +61 2 9290 2199
fax: +61 2 9262 1630
Website: www.classiquewatches.com
Email: Info@classiquewatches.com



Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՓԻՆԿ-ՓՈՆԿԸ ԿԸ ՆՈՒԱԾԷ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԵՒ ԱՐԱԲԱԿԱՆ ՆՈՐ ԳԱԳԱԹՆԵՐ


ՄԻՆՉ ՔՈՅՐ ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՉՈՐՐՈՐԴ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ՃԱՏՐԱԿԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱՂԶԿԱՆՑ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍԻՆ

2007 տարին Հ.Մ.Ը.Մ-ի Լիբանանի ընտանիքին համար եղաւ դժուարութիւններով եւ գանոնք յաղթահարելու ճիգերով լեցուն տարի մը: Երկրի քաղաքական վերլիպայրումներուն հետ կաղն ի կաղ շարունակուող մարզական կեանքը լուրջ դժուարութիւններու առջեւ դրաւ Լիբանանի մարզական բոլոր միութիւններն ու ակումբները, որոնք տարին բոլորեցին գրեթէ անընական պայմաններու մէջ:

Այնուամենայնիւ, կամքն ու նուիրեալ աշխատանքը տեղ-տեղ տուին իրենց արդիւնքները եւ Հ.Մ.Ը.Մ. 2008 տարին ձեռնունայն չդիմաւորեց: Հեծելարշաւի եւ պասքեթպոլի յաջողութիւններու կողքին, Հ.Մ.Ը.Մ-ական ճատրակի աստղը՝ ճատրակի մեծ վարպետ քոյր Քնարիկ Մուրատեան չորրորդ անգամ ըլլալով տիրացաւ արաբական աշխարհի աղջկանց ախոյեանութեան տիտղոսին, մինչ փինկ-փոնկի աղջկանց խումբը նոր գագաթներ նուաճեց լիբանանեան եւ արաբական մակարդակներու վրայ, միութեան անունը ոսկի տառերով արձանագրելով 2007ի մարզական յաջողութիւններու յուշամատենին մէջ:

Արդարեւ, փինկ-փոնկի Լիբանանի ախոյեանութեան





Աւօ Մունջօղլեան

մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.ական Մարիանա Սահակեան-Սոմոնճեան, յաջորդաբար հինգերորդ տարին ըլլալով, տիրացաւ Լիբանանի առաջնութեան տիտղոսին: Երկրորդ հանդիսացաւ քոյր Լարա Քէչէպաշեան, իսկ երրորդ դիրքին տիրացաւ Լիբանանի 1998ի, 2001ի եւ 2002ի ախոյեան քոյր Լիզա Պարիկեան:

Լիբանանի ախոյեանութեան աղջկանց զոյգի մրցումներուն, մրցակցութիւնը եղաւ զուտ Հ.Մ.Ը.Մ.ական: Իրենց բոլոր մրցակիցները պարտութեան մատնելէ ետք, աւարտական փուլ հասան Մարիանա Սահակեան-Սոմոնճեան-Լարա Քէչէպաշեան զոյգը մէկ կողմէ եւ Լիզա Պարիկեան-Նոնի Քէչիշեան զոյգը միւս կողմէ: Յաղթանակը եղաւ ի նպաստ առաջին զոյգին:

Մարիանա իր սխրագործութիւնները կրկնեց նաեւ խառն զոյգի մրցումներուն, երբ Մոհամմէտ Հապաշի հետ տիրացաւ լիբանանեան իր երրորդ տիտղոսին:

Տղոց պարագային, գլխաւոր աստղը եղաւ Լիբանանի 15 եւ 18 տարեկանէն վար դասակարգի ախոյեան Աւօ Մունջօղլեանը, որ այս ընթացքով շուտով կրնայ բազմիւ իր հօրը երբեմնի գահին՝ Լիբանանի տղոց ախոյեանի պատուաբեր աթոռին

վրայ: 1974-1991 տարիներու Լիբանանի ախոյեան Րաֆֆի Մունջօղլեանի գաւազը՝ 15ամեայ Աւոն, հակառակ իր փոքր տարիքին, արդէն իսկ կը գտնուի Լիբանանի լաւագոյն 10 վարպետներու շարքին եւ պարտութեան մատնած է անոնցմէ շատերը: Իր վերջին յաջողութիւնը եղաւ Լիբանանի զոյգի մրցումներու երրորդ դիրքին տիրացումը՝ Ֆատի Ասսիսի հետ: Աւօ 3 տարիէ ի վեր անպարտելի է Լիբանանի 15 եւ 18 տարեկանէն վար տղոց բոլոր մրցումներուն: 18 տարեկանէն վար տղոց զոյգի մրցումներուն, ան Լիբանանի ախոյեանութեան տիտղոսին տիրացաւ Հ.Մ.Ը.Մ.ական Սահակ Փայլեանի հետ:

Լիբանանի խմբային ախոյեանութեան մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.ի տղաքը կատարեցին կարեւոր իրագործում մը, երբ յաղթանակներու շարքով մը հասան մինչեւ աւարտական, ուր տեղի տուին Ռիատի խումբին դիմաց եւ հանդիսացան Լիբանանի երկրորդ: Տարիներէ ի վեր տղոց խումբը նման յաջողութեան չէր հասած:

Հ.Մ.Ը.Մ.ական փինկ-փոնկի յաջողութիւնները չմնացին միայն լիբանանեան ծիրի մէջ: Հոկտեմբերին, աղջկանց խումբը մասնակցեցաւ Յորդանանի մէջ տեղի ունեցած արաբական ակումբներու ախոյեանութեան եւ իրագործեց աննախընթաց յաջողութիւն մը՝ չորրորդ անգամ խլելով արաբական աշխարհի ախոյեանութեան տիտղոսը: 2002ի, 2004ի եւ 2006ի տիտղոսներէն ետք, 2007ի բաժակը յատուկ նշանակութիւն ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի եւ Լիբանանի համար:

Լիբանանի աղջկանց իրագործումին իրենց մասնակցութիւնը բերին Հ.Մ.Ը.Մ.ի... Յորդանանի քոյրերն ու եղբայրները, որոնք մեծաթիւ կերպով ներկայ գտնուեցան Պէյրութի աղջկանց խաղերուն եւ ոգի ի բռին քաջակրեցին իրենց սիրելի խումբը՝ յաղթանակէ յաղթանակ առաջնորդելով զայն:

Յորդանանէն վերադարձին, ախոյեան խումբը արժանացաւ մեծ ընդունելութիւններու: Ախոյեան քոյրերը Պուրճ Հա-



ՅԱԶՈՐԴԱՔԱՐ ԵՐՈՐՈՂ ՏԱՌԻՆ ԸԼԼԱԼՈՎ

Հ.Մ.Ը.Մ.Ի ՏՂՈՑ ԽՈՒՄԲԸ ԿԸ ՀԱՆԴԻՍԱՆԱՅ ՀԵԾԵԼԱՐՇԱԿԻ ԼԻՔԱՆԱՆԻ ԽՄԲԱՅԻՆ ԱԽՈՅԵԱՆ

- ԱՆՅԱՏԱԿԱՆ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ՏԻՏՂՈՍԸ ԿԸ ՊԱՅՈՒԿ ԵՐԿՈՐՈՂ ՏԱՌԻՆ ԸԼԼԱԼՈՎ

Յաջորդաբար երրորդ տարին ըլլալով, Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուֆի տղոց խումբը հանդիսացաւ հեծելարշաւի Լիբանանի խմբային ախոյեան: Ախոյեանութիւնը վճռուեցաւ մէկ հանգրուանէ բաղկացած շրջավազքէ մը ետք: Հ.Մ.Ը.Մ.Ի հեծելանորդները՝ Գէորգ Ալթունեան, Յայկ Սելիքեան, Սալահ Ռապահ, Յովիկ Քիւրտեան, Սիմոն Փանոսեան, Ռազմիկ Քիւրքճեան եւ Կարո Մարգարեան 125 քլմ. երկարութեամբ շրջավազքը աւարտեցին 4.5 վայրկեանի առաւելութեամբ մը իրենց անմիջական մրցակից Հ.Մ.Ս. Պէյրուֆէն:



Անհատական ախոյեանութեան տիտղոսը խլեց Սալահ Ռապահ:

Ախոյեանութեան աւարտին, տիտղոսակիրներուն բաժակները յանձնեց Լիբանանի հեծելարշաւի ֆետերասիոնի նախագահ եղբ. Վաչէ Ծատուրեան:

ԳԵՈՐԳ ԱԼԹՈՒՆԵԱՆ ԿԸ ՏԻՐԱՆԱՅ ԺԱՄԱՅՈՅՅԻ ԴԵՍ ՄՐՅՈՒՄԻ ԱԽՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ

Հ.Մ.Ը.Մ.Ի տղաքը իրենց մասին խօսիլ տուին նաեւ Լիբանանի հեծելարշաւի ժամացոյցի դէմ մրցումին, ուր խմբապետ Գէորգ Ալթունեան փայլուն յաղթանակ մը արձանագրեց՝ 30 քլմ. երկարութեամբ շրջավազքը կտրելով 44 վայրկեան 33 երկվայրկեանէն. արդիւնք մը որ համազօր է ժամական 40 քլմ. արագութեան: Երկրորդ հանդիսացաւ Մազար Ռիատի խումբէն Ջահեր Յաժ, իսկ երրորդ՝ Հ.Մ.Ս. Պէյրուֆէն Սամիր Լիան:

մուտի քաղաքապետարան այցելելով՝ իրենց բաժակը նուիրեցին քաղաքապետ Անդրանիկ Մարըլեանին: Իրենց ի պատիւ Լիբանանի Շրջանային Վարչութիւնը կազմակերպեց ընդունելութիւն մը, որ տեղի ունեցաւ 29 Նոյեմբերին, «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրին մէջ (այս մասին տեսնել էջ 14): Նմանօրինակ ընդունելութիւն մըն ալ կազմակերպեց Լիբանանի մարմնամարզի նախարարութիւնը եւ յատուկ յուշանուէրներով ու պարգեւներով պատուեց ախոյեանները:

ՊԱՍՔԵԹՊՈՒ

Պասքեթպոլը, անցնող ամիսներուն, առիւծի բաժինը ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.Ի մարզական կեանքին մէջ: Հ.Մ.Ը.Մ.Ի Անթիլիասի, Պէյրուֆի եւ Պուրճ Համուտի մասնաճիւղերէն չորս խումբեր իրենց մասնակցութիւնը բերին Լիբանանի Ա. եւ Բ. դասակարգի մրցումներուն:

Հ.Մ.Ը.Մ.Ի Անթիլիասի աղջկանց խումբը, իբրեւ ներկայա-

ցուցչական խումբ, բաւական լաւ արդիւնքներ արձանագրեց Ա. դասակարգին մէջ: Մարզիչ Ժազ Նալպանտեանի հետ խումբը երթի իր 7 մրցումներէն 5ը աւարտեց յաղթանակով, իսկ երկուքը պարտութեամբ: Խումբը մասնակցեցաւ նաեւ Հոսէմէտտին Հարիրիի արաբական մրցաշարին եւ մինչեւ աւարտական հասնելով՝ տեղի տուաւ Անդրանիկի խումբին դէմ:

Խումբին մաս կը կազմեն Ալիք Թապազեան, Սանան Մարգարեան, Նաթալի Սվաճեան, Յոլինէ Գազանճեան, Սանտրա Նաժմ, Գարօյին Մուֆարրէժ, Քրիստին Մուֆարրէժ, Նայիրի Ոսկերիչեան, Քրիստին Նաճարեան, Լէյլա Ֆարէս, էլիան Շալճուպ, էլիանա Ապու Ժաուտէ, Նարէ Տէմիրճեան, Նարօա Յարութիւնեան եւ Միրա Ռըզք:

Նոյն դասակարգին մէջ, Հ.Մ.Ը.Մ.Ի Պէյրուֆի աղջկանց խումբը ունեցաւ տկար ելոյթներ: Մարզիչ էլի Նաժմի հետ խումբը արձանագրեց միայն մէկ յաղթանակ եւ կրեց վեց պարտութիւն: Խումբին մաս կազմեցին Միրէյ Սվաճեան,



ՔՆԱՐԻԿ ՄՈՒՐԱՏԵԱՆ ՃԱՏՐԱԿԻ ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ԱԽՈՅԵԱՆ

Ճատրակի մէջ, 2007ին տիրապետող անուն մնաց Հ.Մ.Ը.Մ.ական քոյր Քնարիկ Մուրատեանը, որ Լիբանանի աղջկանց ախոյեանութեան տիտղոսը պահելէ ետք, Օգոստոսին իր մասնակցութիւնը բերաւ Լիբանանի... տղոց ախոյեանութեան եւ հանդիսացաւ երկրորդ: Դեկտեմբերին, եմէնի մէջ ան մասնակցեցաւ արաբական աշխարհի ախոյեանութեան մրցումներուն եւ 3 յաղթանակով ու 3 հաւասարութեամբ, առաւելագոյն 9 կէտէն 7.5 կէտ ապահովելով՝ չորրորդ անգամ ըլլալով տիրացաւ արաբական աշխարհի աղջկանց ախոյեանութեան տիտղոսին եւ միջազգային մեծ վարպետի տիտղոսին առաջնորդող առաջին աստիճանին:

24ամեայ քոյր Քնարիկ Մուրատեան հանդիսացաւ իգական սեռի առաջին ներկայացուցիչը, որ չորրորդ անգամ ըլլալով տիրացաւ տիտղոսին: Նախապէս, ան ախոյեանութեան տիրացած էր 1999ին (Եմէն), 2002ին (Եգիպտոս) եւ 2004ին (Արաբական Միացեալ Էմիրութիւններ):

Տարիքային ախոյեանութիւններու պարագային, երեք Հ.Մ.Ը.Մ.ականներ հանդիսացան Լիբանանի իրենց դասակարգերու ախոյեանները: Այսպէս, Զրակ Փափազեան եւ Սեդրի Կիրակոսեան տիրացան 16 տարեկանէն վար տղոց եւ աղջկանց առաջնութեան տիտղոսներուն, իսկ Նարեկ Նաճարեան խլէց Լիբանանի 10 տարեկանէն վար պատանիներու ախոյեանութեան տիտղոսը:

Լիբանանի խմբային ախոյեանութեան մրցումներուն, Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի խումբը հանդիսացաւ չորրորդ:



Սուլա Աբրահամեան, Նաթալի Զիլինկիրեան, Լենա Անթունեան, Յոլեր Խրիմեան, Սիւզի Արամեան, Տոնա Նասիֆ, Տիայա Պաշ, Բոլո Հրրբո եւ Յոդիկ Մկրտիչեան:

Բ. դասակարգին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Պուրճ Համուտի աղջրկանց խումբը ունեցաւ բաւական համոզիչ ելուցներ եւ երթի եօթը հանգրուանները աւարտեց 3 յաղթանակով եւ 4 պարտութեամբ:

Տղոց մրցումներուն, Բ. դասակարգին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի տղոց խումբը իր առաջին եօթը մրցումներուն արձանագրեց 4 յաղթանակ եւ 3 պարտութիւն, 12 խումբերու շարքին գրաւելով Յրդ դիրքը:

ՅՈՒԹՊՈՒ

Ֆուլթայլը, դժբախտաբար, ապրեցաւ տեղքայի շրջան մը: Երրորդ տարին ըլլալով Բ. դասակարգի մէջ խաղալով՝ ներկայացուցչական խումբը երթի իր 6 մրցումներուն արձանագրեց 1 յաղթանակ, 1 հաւասարութիւն եւ 4 պարտութիւն: Խումբը նշանակեց 2 կոլ (մէկը փենայթիով) եւ ստացաւ 12 կոլ: Այս ճախող արդիւնքներուն լոյսին տակ, մարզիչ Սեպուհ Պապիկեան ներկայացուց հրաժարականը եւ դարձին խումբին մարզումը ստանձնեց Վաչէ Սարգիսեան, օգնական ունենալով Յորիկ Մոսկոֆեանը:

Լիբանանի բաժակի մրցումներուն, ներկայացուցչական խումբը կանուխէն հրաժեշտ տուաւ մրցակիցներուն, երբ 4-2 արդիւնքով պարտութիւն մը կրեց Նահտա Պալ էլիասէն: Խումբը մեծ մասամբ կը բաղկանայ նա-



խորդ տարեշրջանի երիտասարդ եւ անփորձ մարզիկներէն: Նշենք, որ անցեալ տարեշրջանին (2006-2007), երթի ու դարձի իր 11 մրցումներուն խումբը արձանագրած էր 3 յաղթանակ, 5 պարտութիւն եւ 3 հաւասարութիւն, գրաւելով իր խմբակին չորրորդ դիրքը եւ ետին ձգելով Հ.Մ.Մ.ը, Ախա Ալէյը եւ Ռասինկ ձիւնին:

Օգոստոսին, խումբէն 9 մարզիկներ իրենց մասնակցութիւնը բերին համահայկական չորրորդ խաղերուն, Երեւան:

Ստորեւ՝ ներկայացուցչական խումբին կազմը.-

♦ Բերդապահներ.- Ժագ Պչաքճեան, Յարութ Սարգիս եւ Արսէն Տէր Մաթոսեան:

♦ Յետապահներ.- Յովիկ Իզմիրլեան, Յարութ Կիւլիզեան, Վարդան Գոշոյեան, Վարդան Պոյաճեան, Համբիկ Մկրտիչեան, Աւօ Կիւլիմեան (փոխանցուած՝ Հ.Մ.Լ.Մ. Պուրճ Համուտէն), Յակոբ Գուճեան (Հ.Մ.Լ.Մ. Պուրճ Համուտէն), Դաւիթ Պէրպէրեան, Ասատուր Տէր Մանուէլեան, Հրակ Գալյաճեան եւ Յարութ Մըքճեան:

♦ Միջնապահներ.- Ներսէս Պէրպէրեան, Մհեր Պէրպէրեան, Զոնի Քուլթանի, Զոհրապ Կարապետեան, Կարօ Գազէզեան եւ Սեպասթիան Կոստանդինեան:

♦ Յառաջապահներ.- Սաբօ Ազնաւուրեան, Արա Մարտիրոսեան (Անդրանիկ Պէյրուիթէն), Թոնի Տումէթ, Նժդէհ Գազէզեան (Արարատէն), Աւիկ Յարութիւնեան (Հ.Մ.Լ.Մ. Պուրճ Համուտէն) եւ Քրիստ Մարտիրոսեան:

2007-2008 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԵՐԹԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Ախա Ալէյ-Հ.Մ.Լ.Մ.	0-1
Մառնատէ թրիփոլի- Հ.Մ.Լ.Մ.	3-0
Նահտա Պար էլիաս- Հ.Մ.Լ.Մ.	6-1
Հ.Մ.Լ.Մ.- Իթիմահի	0-0
Մահապպա թրիփոլի- Հ.Մ.Լ.Մ.	1-0
Հ.Մ.Լ.Մ.- Սալամ	0-2

2006-2007 ՏԱՐԵՇՐՉԱՆԻ ԵՐԹԻ ԵՒ ԴԱՐՁԻ ՄՐՑՈՒՄՆԵՐ

Հ.Մ.Լ.Մ.-Ռասինկ ձիւնի	2-0
Հ.Մ.Լ.Մ.-Ախա Ալէյ	1-0
Հ.Մ.Մ.- Հ.Մ.Լ.Մ.	3-0
Հ.Մ.Լ.Մ.- Ռասինկ Պէյրուիթ	1-1
Հ.Մ.Լ.Մ.-Մահապպէ թրիփոլի	2-3
Մառնատէ թրիփոլի - Հ.Մ.Լ.Մ.	2-2
Հ.Մ.Լ.Մ.-Մառնատէ թրիփոլի	1-2
Ախա Ալէյ- Հ.Մ.Լ.Մ.	2-3
Ռասինկ Պէյրուիթ-Հ.Մ.Լ.Մ.	2-0
Մահապպէ թրիփոլի- Հ.Մ.Լ.Մ.	4-1
Հ.Մ.Լ.Մ.- Հ.Մ.Մ.	1-1


ԿԵՐԹԻՆ 77 ՄՐՑՈՒՄՆԵՐ ԽՈՒՄԻՍԵՐ

ARMENIA
for private and group trips
www.saberatours.fr

- Direct Flights
PARIS
YEREVAN
PARIS
- Select your Journey
- Guided Tours for 8 Days or 12 Days

Saberatours Sevan Voyages

WITH THE COLLABORATION OF THE NEW AIRLINE COMPANY



Armavia
Արմավիա



11, rue des Pyramides 75001 Paris tel 331 42 96 10 10 fax 331 42 96 18 77 saberatours@selectour.com	48, cours de la Liberté 69003 Lyon tel 334 78 60 13 66 fax 334 78 60 92 26 sevan@selectour.com	67, La Canchière 13001 Marseille tel 334 95 09 30 60 fax 334 95 09 30 61 marseille@wastecls.fr	32-38, rue Hanrabedoutian Yerevan tel 374 10 52 55 55 fax 374 10 56 40 30 sabera@arminco.com
---	--	--	--

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻՔԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՄԸ ԿԸ ՊԱՏՈՒՔԷ ԱՐԱՔԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԱՂՋԿԱՆՑ ԱԽՈՅԵԱՆ ԻՐ ԽՈՒՄԲԸ



Թղթակից ՊԵՅՐՈՒԹ

Կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, Հինգշաբթի, 29 Նոյեմբեր 2007ի երեկոյեան, «Աղբալեան-Հ.Մ.Ը.Մ.» մարզամշակութային համալիրին մէջ տեղի ունեցաւ ընդունելութիւն մը՝ ի պատիւ արաբական աշխարհի փինկ-փոնկի աղջկանց ախոյեան խումբին:

Ընդունելութեան ներկաներու շարքին էին Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարար ԱՏ՝ մէտ Ֆաթֆաթի ներկայացուցիչը՝ Մոհամմէտ Առաւայտաթ, նախկին նախարար եղբ. Սեպուհ Յովնանեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեան, Կեդրոնական Վարչութեան նախկին ատենապետ եղբ. Գառնիկ Մկրտիչեան, Լիբանանի Ողիմպիական Կոմիտէի նախագահ զօր. Սուհէյլ Խուրի, փինկ-փոնկի միջազգային ֆետերասիոնի անդամ եւ Լիբանանի ֆետերասիոնի

նախկին նախագահ Միշէլ Տը Շատարեւեան, ֆետերասիոնի այժմու նախագահ Սելիմ Նիքրլա Հաթ, Պուրճ Համուտի քաղաքապետ Անդրանիկ Մսրրլեան, Լիբանանի մարզական լրագրողներու սենտիքայի նախագահ Խալիլ Նահհաս, աթլետի ֆետերասիոնի նախագահ Ապտալլա Շեհապ եւ հրահրեալներ:

Բացման խօսքը արտասանեց եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անունով ներկաներուն բարի գալուստ մաղթեց Շրջանային Վարչութեան քարտուղար եղբ. Համբիկ Միսաքեան: Ան ըսաւ, թէ անցեալ տարի, նոյն վայրին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի փինկ-փոնկի աղջկանց ախոյեան մարզիկները նոյն ձեւով պարգեւատրուեցան եւ իրրեւ ախոյեաններ բարձր պահեցին Հ.Մ.Ը.Մ.ի եւ Լիբանանի անունները:

Արաբական ակումբներու ախոյեան հանդիսացած Հ.Մ.Ը.Մ.ի մարզիկները՝ Մարիանա Սահակեան-Սոմունճեան, Լարա Քէչէպաշեան, Լիզա Պարիկեան, Նոէլ Քէշիշեան եւ Դուրին Սունջողլեան, Ամմանի մէջ, աւարտականին պարտութեան մատնելով թունուզեան Պանզարթ խումբը, եկան փաստելու, որ թէեւ Լիբանան փոքր երկիր մըն է, սակայն կարող է մեծ նուաճումներ կատարելու:

Եղբ. Միսաքեան յայտնեց նաեւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի աղջիկներուն արձանագ-



րած յաջողութիւններուն մէջ իր մեծ դերը ունեցած է եւ կը շարունակէ ունենալ Լիբանանի փինկ-փոնկի տասնեակ տարիներու ախոյեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան փինկ-փոնկի ներկայացուցիչ՝ եղբ. Բաֆֆի Մունջօղլեան, որ բոլոր տեսակի զոհողութիւններ յանձն առնելով կ'աշխատի ի շահ Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի վերելքին:

Ապա, յաջորդաբար խօսքեր արտասանեցին Սելիմ Հաժ եւ զօր. Սուհէյլ Խուրի: Անոնք իրենց խօսքերուն մէջ դրուատեցին Հ.Մ.Ը.Մ.ը՝ Լիբանանի մարզական կեանքին ունեցած ներդրումին համար՝ բարձր զնահատելով մանաւանդ փինկ-փոնկի աղջկանց խումբին ձեռք ձգած փայլուն արդիւնքները, տեղական թէ միջազգային մրցաշարքերու ընթացքին:

Այնուհետեւ, խօսք առաւ Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Ան ըսաւ, որ Հ.Մ.Ը.Մ.ի փինկ-փոնկի աղջկանց խումբին արձանագրած յաղթանակները եւ իրագործած նուաճումները հպարտութեան առիթ կու տան իւրաքանչիւր լիբանանցիի՝ նկատի ունենալով, որ խումբին իրագործումները ոչ միայն հայրենական կամ Հ.Մ.Ը.Մ.ին կը պատկանին, այլեւ՝ ամբողջ Լիբանանին:

1924ին, Լիբանանի մէջ իր հիմնադրութենէն ի վեր, Հ.Մ.Ը.Մ. միշտ ալ ախոյեաններ տուած է բոլոր տեսակի մարզաձեւերու մէջ եւ այդ մէկը կը շարունակէ կատարել նաեւ ներկայիս եւ պիտի շարունակէ կատարել յառաջիկային, ըսաւ եղբ. Քէշիշեան:

Ան աւելցուց ըսելով, որ Հ.Մ.Ը.Մ.ի փինկ-փոնկի աղջկանց խումբին կատարած իրագործումին զուգահեռ, քոյր Մարիանա Սահակեան-Սոմունճեան յաջողեցաւ յուսարձակները իր վրայ կեդրոնացնել, երբ տիրացաւ 2007ի փինկ-փոնկի արաբական բաժակի աղջկանց անհատական տիտղոսին:

Հ.Մ.Ը.Մ.ի արձանագրած յաջողութիւններուն մէջ վստահաբար իր կարեւոր եւ մեծ դերը ունի 1974էն 1991 Լիբանանի ախոյեան եղբ. Բաֆֆի Մունջօղլեան, ըսաւ եղբ. Քէշիշեան:

Շնորհաւորելէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի փինկ-փոնկի բոլոր մարզիկները՝ եղբ. Քէշիշեան նշեց, որ եղբ. Բաֆֆի Մունջօղլեանի ճամբան այժմ եկած է շարունակելու տղան՝ Աւօ Մունջօղլեանը, որ հակառակ 15 տարեկան ըլլալուն, ներկայիս 18 տարեկանէն վար դասակարգի Լիբանանի ախոյեանն է:

Նախարար Ահմէտ Ֆաթֆաթի խօսքը փոխանցեց Մոհամէտ Առուայտաթ, որ նախարարին անունով շնորհաւորելէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի ախոյեան մարզիկները, անոնց մաղթեց նորանոր յաջողութիւններ:

Խօսքերէն ետք, եղբ. Քէշիշեան Շրջանային Վարչութեան կողմէ յուշանուէր մը յանձնեց եղբ. Բաֆֆի Մունջօղլեանի, փինկ-փոնկի մարզաձեւին իր ունեցած մեծ ներդրումին համար:

Ապա, ախոյեան մարզիկները յուշանուէրներ ստանալէ եւ յիշատակի յուանկարներ նկարուելէ ետք՝ հատեցին իրենց յաղթանակի կարկանդակը:



Sarkis
or
Paul

SASSOUNIAN INC.

Tools - Supplies - Machines

Complete Line Of Jewelry Supply

716 S. Olive Street
Los Angeles, CA 90014

Tel: (213) 627-1220
(213) 627-1206
Outside Ca: 1-800-544-4419
Fax: (213) 623-6981

www.sassouniantools.com E-mail: info@sassouniantools.com



ԼԻՔԱՆԱԿԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ ԵՒ ՄԱՐՄՆԱԿՐԹՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՊԱՐԳԵԲԱՏՐԷ ՎԱՍՏԱԿԱՔՈՐ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԵՂԲ. ՊԱՏՐԻԿ ԿԻԼՊԷՆԿԵԱՆԸ



**Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ**

Կազմակերպութեամբ Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան եւ գործադրութեամբ Լիբանանի սկստակաւ ֆետերասիոնին ու Լիբանանի արեւոյշներու միութեան, Ուրբաթ, 16 Նոյեմբերի յետմիջօրէի ժամը 5ին, «Մաքասէտ» իսլամական բարեսիրական միութեան կեդրոնին մէջ տեղի ունեցաւ հանդիսութիւն մը, որուն ընթացքին պարգևատրուեցան լիբանանեան ըսկստակութեան երկար տարիներ ծառայած 26 դէմքեր, որոնց կարգին՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան նախկին անդամ, վաստակաւոր Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Պատրիկ Կիւլպէնկեան:

Հանդիսութեան ներկաներու շարքին էին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ՝ եղբայրներ Միհրան Շիմշիրեան եւ Գառնիկ Մկրտիչեան, Լիբանանի Շրջանային Վարչութեան անդամներ՝ եղբ. Միշէլ Տիքիտրոզեան, քոյր Լուսին Գազէզեան, Շրջանային Սկստակ. Խորհուրդի ատենապետ քոյր Արաքս Գուլաճեան, Շրջանային խմբապետութեան անդամներ, Լիբանանի սկստակաւ ֆետերասիոնի անդամներ, միութիւններու սկստակաւ եւ խմբապետական կազմերու ներկայացուցիչներ եւ հոծ բազմութիւն մը:

Հանդիսութեան սկիզբը, Լիբա-

ՇՆՈՐՀԱՔՈՐԱԳԻՐ

**Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան
Յարգարժան Կենտրոնական Վարչութիւն**

Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութեան Կենտրոնական Վարչութիւնը եւ Կազմակերպութեան բոլոր անդամները ջերմօրէն շնորհակարար են Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան կողմից եղբայր Պատրիկ Կիւլպէնկեանի պարգևատրումը, որը վաստակն է իր երկար տարիների անձնուրաց ու բոլորանուէր աշխատանքների՝ յանուն մարդկութեան եւ հայ ազգի:

Եղբայր Կիւլպէնկեանի բեղմնաւոր անցեալը եւ կտրած ճամբան՝ որպէս մղիչ ուժ պիտի առաջնորդի հայ երիտասարդութեան այդ ուղին շարունակելու մինչեւ մեր ժողովրդի վեհ նպատակների իրագործումը:

Սաղթում ենք Ձեզ յաջողութիւն:

Յարգանք՝

Հ.Մ.Ա.Կ.Ի

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

նանի արենոյններու միութեան նախագահ Նուրա Ժարուտի յայտնեց, թէ բաւերը կը պակսին երախտագիտական զգացումներ արտայայտելու համար պարզեւատրուողներուն, որոնք իրենց անձը նուիրեցին առողջ եւ գիտակից հաւաքականութեան մը ստեղծման ի խնդիր: Ան հաստատեց, որ ապագայ սերունդները պիտի քայեն իրենց նախնիներու ուղիով:

Լիբանանի սկառուտական ֆետերասիոնի փոխ նախագահ Քամալ Ֆախրը յայտնեց, թէ սկառուտական շարժումը ունի յատուկ սկզբունքներ եւ նպատակներ, որոնք զինք կը դարձնեն համաշխարհային շարժում, որուն մաս կը կազմեն աւելի քան 28 միլիոն սկառուտներ՝ աշխարհի չորս ծագերէն: Ան ըսաւ, որ սկառուտական շարժումը կը նպատակադրէ հայրենիքին եւ ժողովուրդին ծառայել: Ֆախրը շեշտեց, որ պարզեւատրուողները տարիներ շարունակ ծառայեցին, սերունդներ դաստիարակեցին եւ իրենց աշխատանքին վարձատրութիւնն է, որ կը ստանան այսօր:

Լիբանանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան նախարարութեան խօսքը փոխանցեց նախարարութեան երիտասարդութեան եւ հանրային կրթութեան բաժանմունքի նախագահ Ֆատիա Հալալ: Ան հաստատեց, որ ինչ ալ ըսուի գնահատելու համար պարզեւատրեալները՝ անբաւարար է, որովհետեւ «չենք կրնար անոնց իրաւունքը, արժէքը ճշդել»: Հալալ յայտնեց, թէ անոնք իրենց ամբողջ կեանքին ընթացքին գոհողութիւն եւ ջանք չխնայեցին իրենց միութիւններու բարգաւաճման ի խնդիր, եւ աւելցուց, որ կը խոնարհի անոնց տարած աշխատանքին դիմաց:

Այնուհետեւ ներկայացուեցաւ իւրաքանչիւր պարզեւատրեալի կենսագրականը եւ գործունէութիւնը, ապա անոնց յանձնուեցան վկայագիրներ եւ յուշատախտակներ:

Պարզեւատրուողներուն անունով խօսք առաւ Երուսէմ Տանտան, որ շնորհակալական խօսքեր ուղղեց կազմակերպիչ յանձնախումբին եւ նախարարութեան:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԸ Կ՝ՈԳԵԿՈՉԷ ՆԱՀԱՏԱԿՈՒԱԾ ԵՒ ՄԱՀԱՅԱԾ Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԸ

Թղթակից
ՊԵՅՐՈՒԹ

ՀՄԸՄԻ Լիբանանի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ, Կիրակի, 11 Նոյեմբեր 2007ին, Պէյրութի Մ. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ մատուցած Պատարագէն ետք տեղի ունեցաւ հոգեհանգստեան արարողութիւն, Հ.Մ.Ը.Մ.ի նահատակ եւ մահացած անդամներու յիշատակին:

Հոգեհանգստեան արարողութենէն առաջ խօսք առաւ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան: Ան ըսաւ, թէ Հ.Մ.Ը.Մ.ը գաղափարի եւ մաքառումի միութիւն մըն է, որ ունի իր հաւատամբը, տեսիլքը եւ առաքելութիւնը, որոնք հաստատուած են հիմնադիրներուն կողմէ եւ յանձնուած են մեր ժողովուրդի նուիրեալներուն:

«Յ.Մ.Ը.Մ.ականը իր առաքելութեան մէջ յաջողելու համար եղած է եւ պէտք է ըլլայ յանձնառու անձ, ու որեւէ յանձնառութիւն իր կարգին կ'ենթարդէ գո-



հողութիւն», հաստատեց Առաջնորդը՝ աւելցնելով, որ այսօրուան Հ.Մ.Ը.Մ.ականները պէտք է շարունակեն իրենց նախնիներու ուղին:

Հ.Մ.Ը.Մ.ի նահատակ եւ մահացած անդամներու հոգեհանգստեան արարո-

ղութենէն ետք, Առաջնորդարանի դահլիճին մէջ, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան անունով խօսք առաւ ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան, որ հարց տուաւ, թէ ի՞նչպէս մոռնալ յիշատակը այն մարդիկներուն, վարչականներուն եւ սկառուտներուն, որոնք տարիներ շարունակ քրտինք թափեցին՝ բարձր պահելու համար Հ.Մ.Ը.Մ.ի դրօշն ու միութեան շահերը: Եղբայրը յայտնեց, որ Հ.Մ.Ը.Մ.ականները պարտաւոր են անցեալի սերունդներուն յիշատակը ստուերի մէջ չձգել (խօսքին ամբողջութիւնը տեսնել էջ 5):

Ապա, Առաջնորդ Գեղամ Եպս. Խաչերեան անգամ մը եւս խօսք առնելով ըսաւ, թէ մահացածները գաղափարէն հեռացած չեն, այլ գաղափարին համար գործած անձեր են, որոնք գաղափարին ճամբով կը մնան մեզի հետ:

Առաջնորդ սրբազանը նշեց. «Մեր ժողովուրդին արտին մէջ ապրող մշակը Յ.Մ.Ը.Մ.ն է, որ յոյս կը ներշնչէ»:

Հաւաքի աւարտին, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութիւնը ընդունեց ներկաներու ցաւակցութիւնները:



ՎԿԱՅԵԱԼ ԿԱՐԳԻ ՏՈՒՉՈՒԹԵԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Թղթակից ՊՈՒՐԾ ՀԱՍՈՒՏ

Վկայեալ կարգի դասընթացքի հետեւած եւ նուազագոյնը միաւորի խմբապետի պաշտօն ստանձնած եւ իրենց սկաուտապետ կեանքին ընթացքին միութեան վերելքին ու զարգացման նպաստած 36 քոյր-եղբայրներ, Ուրբաթ, 16 Նոյեմբերի երեկոյեան ժամը 8.30ին, Պուրճ Համուտի Ազգային Լեւոն եւ Սոֆիա Յակոբեան Գոյէճի սրահին մէջ ստացան Վկայեալ կարգի վկայագիր եւ նշանակ:

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան նախաձեռնութեամբ տեղի ունեցած այս հանդիսութեան բացումը կատարեց եղբ. Բաֆֆի Կէօօղլան-


եան: Ան անդրադարձաւ Վկայեալ կարգի տուչութեան իմաստին եւ հրաւիրեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեանը, Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտ Խորհուրդի ատենապետ քոյր Արաքս Գուլաճեանը եւ Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Ատոմ Թնճուկեանը, որպէսզի կատարեն տուչութիւնը: Վկայագիրներու եւ նշանակներու արժանացան հետեւեալ եղբայրներն ու քոյրերը.- Սարգիս Գասապեան, Գէորդ Գրիգորեան, Ալին Պաղտասարեան, Փառլա Գէորգեան, Յակոբ Տէր Ղուկասեան, Ժան Քէշիճեան, Վիգէն Սարգիսեան, Ժուլիանա Այնճեան, Շանթ Պարսամեան, Իշխան Եղիայեան, Ասպետ Եղիայեան, Յակոբ Զպլաքեան, Սեդա Պէշլեան, Կարէն Աբրահամեան, Վար-




դուկ Ֆունրզեան, Պէթի Պէշլեան, Իրմա Ճէրճեան, Ներսէս Լիպարեան, Լուսին Գազէզեան, Վահէ Պօղոսեան, Մարալ Հաճինազարեան, Լիզա Միքայէլեան, Գէորդ Վարդանեան, Արշակ Արուշեան, Թամար Սէթեան, Ժանէթ Փամպուրեան, Անի Մուրաջանեան, Կարօ Մուրաջանեան, Թային Իշխանեան, Վահէ Նաճարեան, Մանօ Մերտիսանեան, Կարօ Թերզեան, Հրայր Մարգարեան, Բաֆֆի Գէորգեան, Ֆէտի Թաթրա եւ Յակոբ Էքմէքճեան (ոմանք ի բացակայութեան):

Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտ Խորհուրդին անունով խօսք առաւ քոյր Արաքս Գուլաճեան: Ան նշեց, որ հաւաքին պատճառը գնահատումն ու արժեւորումն է այն խմբապետ-խմբապետուհիներուն, որոնք մօտիկ անցեալին գործեցին ու կը գործեն՝ հաւատքով եւ գիտակցութեամբ: Անոնք են, որ գայլիկին ու արծուիկին փոխանցեցին, սորվեցուցին ու կը շարունակեն սորվեցնել խոստումն ու կանչը, արիին ու արեւոյշին՝ խոստումն ու դաւանանքը, երէցին ու պարմանուհիին՝ երդումն ու ծառայասիրութիւնը:

Քոյր Արաքս ըսաւ, թէ վկայեալ Հ.Մ.Ը.Մ.ականներէն կ'ակնկալուի, մարդուսի անհրաժեշտութեան այս օրերուն, զօրակից, գործակից ու գործօն մասնակից ըլլալ միութենական կեանքին, յատկապէս սկաուտական մարզին իրենց փորձառութիւնն ու գիտելիքները փոխանցելու համար:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարայիս Գապասագալեան



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան

Իր խօսքին աւարտին, քոյրը ողջունեց ներկայութիւնը Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր Ատոմ Թնճուկեանին, որ հիւրաբար կ'այցելէր Լիբանան եւ այս առիթով ներկայ էր ձեռնարկին:

Վկայեալներուն խօսքը փոխանցեց եղբ. Ներսէ՛հ Լիպարեան: Ան իր խօսքին մէջ անդրադարձաւ աւելի քան տասը տարի առաջ սկսած դասընթացին, որ գանազան հանգրուաններով ընդմիջւած եւ վերսկսած էր: Եղբ. Ներսէ՛հ լուսարձակի տակ առաւ այս կարգին իմաստը. «Այս հաստատագիրին տուչութեան գաղափարը իւրայատուկ է, որովհետեւ մեր մեծամասնութիւնը այսօր տարագաւոր չէ: Սակայն կը մնանք հաստատ Հ.Մ.Ը.Մ.ականներ՝ ամբողջ սրտով ու հաւատքով», ըսաւ ան: Իր խօսքը շարունակելով, եղբ. Ներսէ՛հ վկայեալներուն անունով շնորհակալութիւն յայտնեց եւ անոնց անունով խոստացաւ շարունակել ծառայութեան երթը, մանաւանդ Լիբանանի ներկայ տագնապալի օրերուն, իբրեւ Հ.Մ.Ը.Մ.ականներ եւ կամ նախկին տարագաւորներ, անսալ որեւէ կոչի, որ կը նպաստէ Հ.Մ.Ը.Մ.ի եւ մանաւանդ՝ սկստութեան վերելքին:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի պատմականին, անոր մարզական եւ սկստական գործունէութեան, նուաճումներուն եւ սփիւռքահայութեան կեանքին մէջ ունեցած դերակատարութեան ու ներդրումին անդրադարձաւ Շրջանային


Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Ան շեշտը դրաւ հայրենիքէն դուրս ապրողներու սրտերուն մէջ հայրենիքի սէրը մնայուն կերպով արթուն պահելու Հ.Մ.Ը.Մ.ի յանձնառութեան վրայ:

«Այսօր, 16 Նոյեմբեր 2007ին, հաճելի գոլգոթիպութեամբ մը, վաստակաւոր խումբ մը Հ.Մ.Ը.Մ.ական սկստներ Վկայեալ կարգի վկայականներ կը ստանան՝ 89 տարիներ ետք Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան ճիշդ թուականէն, եւ նոյն օրը վեթերան սկստ եղբայր մը՝ Պատրիկ Կիւլպէնկեան կը պարգեւատրուի Լիբանանի երիտասարդութեան եւ

մարմնակրթութեան նախարարութեան կողմէ», ըսաւ եղբ. Քէշիշեան, աւելցնելով, որ վկայականները արգասիքն են երկար տարիներու ընթացքին սկստական շարքերու մէջ տարուած ծառայութեան: Ան նշեց, որ այս վկայագիրը նաեւ յաւելեալ պարտք մը կը դնէ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի ուսերուն՝ ներկայ պայմաններուն մէջ եւ նորանոր մարտահրաւէրներու դէմ յանդիման կրկնակի աշխատանք տանելու՝ հայ պատանին ու երիտասարդը հեռու պահելու համար խաթարուած միջավայրերէ եւ զանոնք պահելու համար միութեան կեանքին մէջ:



Հանդիսութեան ներկայները: Ա. շարքի վրայ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայ եւ նախկին անդամներ եւ եղբ. Ատոմ Թնճուկեան (ձախէն չորրորդը):



Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ քոյր Արաքս Գուլաճեան, Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Յակոբ Քէշիշեան: Վկայեալներուն խօսքը կը փոխանցէ եղբ. Ներսէս Լիպարեան:

Այս առիթով, եղբ. Քէշիշեան շնորհալորեց վկայեալներն ու նախարարութեան կողմէ պարգևատրուած եղբ. Պատրիկ Կիւլպէնկեանը՝ հաստատելով, որ «Հ.Մ.Ը.Մ.ի պողպատեայ հիմերուն վրայ կը պատրաստուին առաքինի սկաուտներ, հայրենիքի պաշտպան վաղուան զինուորներն ու ապագայի ղեկավարներ»:

Հանդիսութեան փակման խօսքը արտասանեց Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեան: Ան ըսաւ, թէ նման հաւաքներ առիթ են անցեալին ակնարկելով ըսելու. «Փառք ու պատիւ մեր ծրնողներուն, որոնք ասկէ 89 տարիներ առաջ՝ այսօրուան պէս հրաշագործ եւ

վեհատեսիլ գաղափարը ունեցան ծնունդ տալու Հ.Մ.Ը.Մ.ին»:

Եղբ. Գապասագալեան ըսաւ, թէ միութեան երկարամեայ ուղին եւ պատմութիւնը իրենց հետ թելադրանքներ կը բերեն. «Խօսքին ու գործին մէջ ծով մը կայ. խօսքը շատ յաճախ պղպղակի կը նմանի, մինչ գործը՝ ստեղծագործութիւն է: Այսօր, աւելի քան երբեք, մենք պահանջը ունինք ստեղծագործ միտքերու եւ կամքերու, ստեղծագործ բազուկներու, որոնք կ'ենթադրեն յաւելեալ ճիգ, զոհողութիւն, նուիրում եւ յատկապէս՝ սէր, որովհետեւ գործ մը սիրելով կ'ընենք, ոչինչ կը խնայենք անոր համար եւ հազար միջոց կը գրտ-

նենք զայն իրագործելու եւ յաջողցնելու համար, այլապէս ան նման պիտի ըլլայ առանց դերձանի կար կարելու»:

Իր խօսքին աւարտին, եղբ. Գապասագալեան վկայեալները շնորհալորելով վստահեցուց, որ անոնք յառաջիկայ օրերուն գործնապէս մասնակից պիտի դառնան հաւաքական մեր աշխատանքներուն՝ միշտ գերադասելով միութեան վեհասլաց նշանաբանը՝ «Բարձրացիր-բարձրացուր»ը: Ան նաեւ ողջոյնի եւ շնորհալորութեան իր խօսքերը ուղղեց եղբայրներ Ատոմ Թնճուկեանին եւ Պատրիկ Կիւլպէնկեանին:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԿԱՌԻՏՈՒԹԵԱՆ 100ԱՄԵԱԿԻ ՆՇՈՒՄ ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՋ

Թղթակից ՊՈՒՐԾ ԳԱՄՈՒՏ

Համաշխարհային սկաուտական շարժումի ստեղծման 100ամեակի տօնակատարութիւններու շարքին, կոկիկ ու պատշաճ հանդիսութիւն մըն ալ տեղի ունեցաւ Լիբանանի մէջ, կազմակերպութեամբ՝ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկաուտ. Խորհուրդին: Հանդիսութիւնը կատարուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի

Շրջանային Վարչութեան գրասենեակին մէջ, «Երեւանեան» կեդրոնի երկրորդ յարկին վրայ, ներկայութեամբ մասնաճիւղերու Սկաուտ. որհուրդներուն եւ միաւորներու մասնաճիւղերու խմբապետներուն: Բարի գալուստի խօսքը արտասանեց Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ քոյր Արաքս Գուլաճեան: Ան յայտնեց, թէ համաշխարհային սկաուտութեան հիմնադրութեան 100ամեակին առիթով Շրջանային Սկաուտ. Խորհուրդը որոշած է սեղմ շրջանակի մէջ յիշատակել այս տօնը, որովհետեւ Լիբանանի քաղաքական պայմանները չեն արտօներ, որ անիկա նշուի մեծ շուքով: Շրջանային Սկաուտ. Խորհուրդին խօսքը փոխանցեց քոյր

Իր մա ձէրէճեան: Ան անդրադառնալով սկառուտութեան հիմնադրութեան՝ յայտնեց, թէ անգլիական բանակի սպայ զօրավար լորտ Պէյտըն Փաուըլ անդրադառնալով որ բանակի երիտասարդ անդամները չեն գիտակցիր իրենց պատասխանատուութիւններուն, գաղափար չունին քարտէսագիտութենէ, անմիջական բուժօգնութենէ եւ միայն գիտեն կարդալ-գրել, իր մտքին մէջ ծնունդ կ'առնէ սկառուտական շարժում յառաջացնելու գաղափարը՝ պատրաստելու համար «օգտակար եւ վստահելի անձեր»:

Շարունակելով, քոյր ձէրէճեան հաստատեց, որ 100 տարի ետք տակաւին սկառուտութիւնը կը մնայ միակ դպրոցը, որ կը նպատակադրէ պատրաստել առողջ, ինքնավստահ, քաջ, նախաձեռնող, ծառայասէր, նկարագրի տէր տիպար քաղաքացիներ եւ ղեկավարներ: Ան նաեւ շեշտեց, որ 100 տարի ետք Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Սկառուտ. Խորհուրդը, խմբապետութիւնը եւ բոլոր սկառուտները կը խոստանան իրագործել հայ ժողովուրդի գերագոյն նպատակները, բարձրանալ եւ իրենց հետ բարձրացնել Հ.Մ.Ը.Մ.ի ջահը՝ միշտ պատրաստ մնալով պատնէշի վրայ:



ԵՂՐ. ԼԵՒՈՆ ԹԱՇՃԵԱՆԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՊԵՅՐՈՒԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԱԹՈՆԻՆ

Յաջորդաբար հինգերորդ տարին ըլլալով, վեթերան Հ.Մ.Ը.Մ.ական եղբ. Լեւոն Թաշճեան, Նոյեմբերին, իր մասնակցութիւնը բերաւ Պէյրութի միջազգային 5րդ մարաթոնին:

Եղբ. Թաշճեան, որ պատահականօրէն կրեց թիւ 42 շապիկը, 1953ի ծնունդներու դասակարգին մէջ հանդիսացաւ հինգերորդ՝ արձանագրելով 4 ժամ եւ 40 վայրկեան արդիւնք մը:

42 քլմ. վազելով եղբ. Թաշճեան ապացուցեց, որ կը մնայ միշտ կայտառ ու պատրաստ՝

Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը միջազգային նման մրցաշարքերու բարձր պահելու համար:

The Champs Élysées just steps away and the Parc Monceau nearby

HOTEL



PAVILLON MONCEAU
PARIS

*Full of charme,
Tastefully decorated 36 rooms
and 6 suites with individual
heating/air conditioning,
direct access telephone line,
internet connection, minibar,
safety box and satellite TV.
Private bathroom with hairdryer.
The suites can accommodate
3 adults or a family
with parents and 2 children.*



43 rue Jouffroy d'Abbans 75017 Paris
Tel 331 56 79 25 00 - Fax 331 42 12 99 38

infos@pavillon-monceau.com
www.pavillon-monceau.com

Studio VIKEN 2005 PARIS



ՊԷՅՐՈՒԹԻ ՄԿԱՌԻՏՆԵՐԸ ԼԻԲԱՆԱՆԻ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԳԱԳԱԹԻՆ ՎՐԱՅ

տէի մասնաճիւղէն 3 պատասխանատուներ ուղղուեցան հիւսիսային Լիբանանի Արզ շրջանը եւ սկսան աւելի քան 25 քմ. երկարութեան արշաւին: Բանակավայր ժամանելէ ետք, երէցները հաստատեցին իրենց վրանները եւ ընթրեցին:

Կիրակի առաւօտ, կանուխ ժամերուն, երէցները վերսկսան արշաւելու եւ ժամեր ետք հասան լեռան գագաթը, ուր կարճ դադարէ մը ետք, բռնեցին վերադարձի ճամբան, նոյնպէս արշաւելով:

Կիրակի կէսօրին մասնաճիւղին խմբապետական կազմը, «Մեղրի» փաղանգի պարմանուհիները եւ Սկառտ. Խորհուրդը միացան երէցներուն եւ միասնաբար ճաշեցին էհտէնի մէջ:

Այս յայտագիրը, որ իւրայատուկ էր իր նպատակով, տարողութեամբ եւ դժուարութեամբ, եղբայրներուն մէջ վերակենդանացուց չարքաշուծիւնը, ինքնավստահութիւնը եւ վերլիչեցուց, թէ օր մը բոլորը պէտք է արշաւեն դէպի Արարատի գագաթը:

ճեցին Քորնէթ Սառտան՝ Լիբանանի եւ Միջին Արեւելքի բարձրագոյն գագաթը, ուր ամպերէն վեր, ամայութեան մէջ, հովերուն եւ ցուրտին դէմ կոթողեցին Եռագոյնն ու Հ.Մ.Ը.Մ.ի դրօշը:

Արշաւը սկսաւ օր մը առաջ, Շաբաթ, 13 Հոկտեմբերի առաւօտեան կանուխ ժամերուն, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի աւելուբէն, ուրկէ 11 երէցներ եւ ժրտէյ-

Սկառտ ՊԷՅՐՈՒԹ

Երկօրեայ երկար արշաւէ մը ետք, Կիրակի, 14 Հոկտեմբեր 2007ի առաւօտեան, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի «Զարեհեան» փաղանգի երէցները նուա-

ՄԿԱՌԻՏԱԿԱՆ ՇԱՐՔԵՐՈՒ ԶԻՐՔԵՐՈՒ ՅԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ՄՐՑԱՆՔ

Թղթակից ՊՈՒՐԾ ԳՍՈՒՏ

Հովանաւորութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Վարչութեան, կազմակերպութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Լիբանանի Շրջանային Սկառտ. Խորհուրդին եւ Շրջանային խմբապետական կազմին ու մասնակցութեամբ մասնաճիւղերու սկառտական կազմերուն, Կիրակի,

18 Նոյեմբեր 2007ի յետմիջօրէի ժամը 4ին, Պուրճ Համուտի «Յովհաննէս Պօղոսեան» թատերասրահին մէջ տեղի ունեցաւ ձիւղերու յայտնաբերման մրցանք՝ ներկայութեամբ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներու, մասնաճիւղերու վարչութիւններու ներկայացուցիչներու, ծնողներու, ըսկառտներու եւ մեծ թիւով համակիրներու:

Լիբանանի, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկառտական քայլերգներուն յոտնկայս ունկնդրութենէն ետք ձեռնարկին բացման խօսքը արտասանեցին Կալի Խիւտապերտեան (արծ-

ւիկ) եւ Նազօ Թովմասեան (երէց), որոնք բարի գալուստ մաղթելով ներկաներուն յայտնեցին, թէ նշեալ մրցանքը կը նպատակադրէ քաջայերել արուեստի մարզին մէջ սկաուտներուն ունեցած նախասիրութիւնները՝ յայտնաբերելով ենթականերուն կարողութիւններն ու ձիրքերը:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Անթիլիասի, Պէյրութի, Պուրճ Համուտի եւ ժըտէյտէի սկաուտները անհատական թէ խմբային կատարումներով բեմ բարձրացան՝ ներկայացնելու համար ասմունքներ, պարեր, թատերական ներկայացումներ, կենդանի պատկերներ, նուագներ եւ երգեր:

Մրցանքին կը մասնակցէին մոկլիները, գայլիկ-արծուիկները, արի-արենոյշները եւ երէց-պարմանուհիները, որոնք երկար ժամանակ աշխատելէ ետք հանդէս կու գային՝ դատական կազմին կողմէ ստանալու համար համապատասխան արժեւորումներ ու գնահատականներ:

Սկաուտները կարողացան ազգային, սկաուտական, մարզական, դասական, կատակերգական ու այլ թեմաներով յայ-



տազրին ընթացքին արժանանալ ներկաներու ծափահարութիւններուն: Կատարումներէն ետք բեմ բարձրացան դատական կազմի անդամները՝ Իրմա Գապաբեան-Տէտէեան, Միքայէլ Սկրտիչեան, Յասմիկ Պէրթիզլեան, Գօգօ Արբաճեան եւ Անի Կոստանեան՝ յայտարարելու համար մրցանքին արդիւնքները:

Գատական կազմին անունով խօսք առաւ Իրմա Գապաբեան-Տէտէեան, որ յայտնեց, թէ քաջայերելի է կազմակերպումը նմանօրինակ

ձեռնարկներու, որոնք լաւապէս կը ծառայեն սկաուտներու ձիրքերու յայտնաբերման եւ զարգացման: Ան հաստատեց, որ մասնակիցները շատ լուրջ եւ երկարաշունչ աշխատանք կատարած էին, որուն իբրեւ արդիւնք՝ դատական կազմը մետախնդիր եւ յուշանուէրներ յանձնեց բոլոր մասնակցողներուն:

Մրցանակներ ստացան նաեւ դաշնակ նուագող սկաուտներն ու գծագրութեան մրցանքին մասնակիցները:

Ձիրքերու յայտնաբերման մրցանքը փակուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:

With the compliments of

Restaurant Al-Mayass



ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻԲՂԱՅԻՆ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ՍԵՄԻՆԱՐ՝ ՔԻՆԿԸՍԹԸՆԻ ՄԷՋ

Տիրան Շահինեան ՄՈՆԹՐԷԱԼ

ՀՄԸՄ-ի Գանատայի շրջանի տարեկան խմբապետական սեմինարը տեղի ունեցավ 15 Սեպտեմբեր 2007ին, առաւօտեան ժամը 9էն սկսեալ, Քինկըթընի մէջ: Ժողովին ներկայ գտնուեցան Շրջանային Վարչութեան անդամներէն եղբայրներ Բարգէն Կարապետեան, Մոսիկ Թոփուզեան եւ Լեւոն Նաճարեան: Ներկայ էին Մոնթրէլէի եւ Թորոնթոյի մասնաճիւղերէն 42 խմբապետ-խմբապետուհիներ, փոխ խմբապետ-խմբապետուհիներ եւ օգնականներ: Գէմպրիճի մասնաճիւղի վարչութեան կազմէն ներկայ էին երեք քոյրեր: Շրջանային Վարչութեան ատենապետ եղբ. Բարգէն Կարապետեանի բարի գալուստի խօսքէն ետք, ժողովը ընտրեց իր

ղեկանը (եղբ. Արա Գուլումճեան եւ քոյր Գառնի Գասապեան) եւ գործադրեց պատրաստուած օրակարգը, իր աշխատանքները աւարտելով կէսօրէ ետք ժամը 5ին: Ժողովը նախ լսեց մասնաճիւղերու սկառտական աշխատանքներու մասին զեկոյց, ապա՝ մանրամասնօրէն քննեց շրջանի յաջորդ միջ-մասնաճիւղային բանակումին նախապատրաստական աշխատանքները: Բանակումը տեղի պիտի ունենայ 2008ի ամրան:

Ժողովը քննեց Հիւսիսային Ամերիկայի երեք շրջաններու միջեւ սկառտական հանդիպումներու կարելիութիւնը եւ միջ-շրջանային սկառտական սեմինարին մանրամասնութիւնները:

«Յառաջ նահատակ»ով փակուած սեմինարին մասնակցող խմբապետները գնահատանքով արտայայտուեցան անոր մասին:

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍԻ, ԼՈՆՏՈՆԻ ԵՒ ԵՐՈՒՄԱՂԷՄԻ ՆՈՐ ՎԱՐՉՈՒԹԻԲԻՆՆԵՐ

Վերջին շրջանին, անդամական իրենց ընդհանուր ժողովները գումարեցին եւ նոր վարչութիւններ ընտրեցին Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանսի, Լոնտոնի եւ Երուսաղէմի մասնաճիւղերը:

Ստորեւ՝ նորընտիր կազմերը աշխատանքային իրենց բաժանումներով:

Հ.Մ.Ը.Մ.-ՖՐԱՆՍ

- Ատենապետ- եղբ. Լեւոն Պաղտասարեան
- Փոխ ատենապետ- եղբ. Վարանդ Պաղտասարեան
- Ատենադպիր- քոյր Ռիթա Իսահակեան
- Գանձապահ- եղբ. Յարութ Պազգալեան
- Հաշուապահ- եղբ. Նազո Նաճարեան
- Խորհրդականներ- եղբայրներ Հարմիկ Օհանեան, Արմէն Մնացականեան,

Նարեկ Արթինեան, Մորիս Տէմիրճեան, Անդրանիկ Պահարեան եւ Անտրէ Մարգարեան:

Հ.Մ.Ը.Մ. ԼՈՆՏՈՆ

- Ատենապետ եւ սկառտական բաժանմունքի կապ- եղբ. Արմանտ Աբրամեան
- Ատենադպիր- քոյր Արմինէ Գասպարեան
- Հաշուապահ եւ մարզական բաժանմունքի կապ- եղբ. Անտրէ Դադայեան
- Գանձապահ եւ տեխնիկականի պատասխանատու- եղբ. Ալէն Դաւթեան
- Տնտեսական- քոյր Զուարթ Ստեփանեան
- Շրջանաւարտից յանձնախումբի կապ, ղրամահաւաք (արտաքին)- քոյր Եւրբի Մարուխանֆ
- HYE յանձնախումբի կապ- քոյր Ալեանոյ Յովհաննիսեան

Հ.Մ.Ը.Մ. ԵՐՈՒՄԱՂԷՄ

- Ատենապետ- եղբ. Սերոբ Սահակեան
- Փոխ ատենապետ- եղբ. Յակոբ Տըլտըրեան
- Ատենադպիր- եղբ. Յարութ Պաղամեան
- Գանձապահ- քոյր Ազնիւ Հինտոյեան
- Սկառտապետ- եղբ. Րաֆֆի Եգէկէլեան
- Հաշուապահ- եղբ. Ռուբէն Նալպանտեան
- Մարզականի ներկայացուցիչ - եղբ. Կարո Պաղպուտէրեան
- Մշակութայինի ներկայացուցիչ - եղբ. Գէորգ Սանտրունի
- Ընկերայինի ներկայացուցիչ- եղբ. Անդրանիկ Տէմիրճեան
- Նոր Սերունդի ներկայացուցիչ - քոյր Ռոզան Կիրակոսեան
- Երիտասարդականի ներկայացուցիչ - եղբ. Գէորգ Հէքիմեան



Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԷԱՆ ՄԻԱՑԵԱԿ ՆԱՀԱՆՔՆԵՐՈՒ ԾՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 30ԱՄԵԱԿԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

**Թղթակից
ՈՒՈՐՈՐԹԱՈՒՆ**



.Մ.Ը.Մ.Ի Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանը մեծ շուքով նշեց իր հիմնադրութեան 30ամեակը: Հանդիսութիւնը տեղի ունեցաւ «Շերաթոն Ֆրամինկհամ» հիւրանոցին մէջ: Ներկայ էին հանդիսութեան հովանաւոր՝ Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեանի ներկայացուցիչ Անուշաւան Եպս. Դանիէլեան, Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Վահրամ Դանիէլեան եւ Գօգօ Պալեան, Շրջանային Վարչութեան անդամներ, Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վահան Չալիքեան, Ս. Ստեփանոս եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Անդրանիկ Ա. Քհնյ. Պալճեան, Կաթողիկէ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Հայր Ռաֆայէլ Անտոնեան եւ Աւետարանական եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Պատուելի Աւետիս Պոյնարեան:

Շրջանային Վարչութեան, Պոսթընի մասնաճիւղի վարչութեան եւ 30ամեակի կազմակերպիչ յանձնախումբին ժրջան աշխատանքին շնորհիւ հանդիսութիւնը պսակուեցաւ մեծ յաջողութեամբ:



Հանդիսութիւնը սկսաւ դրօշակակիր արի-արեւոյշներու հանդիսաւոր մուտքով, որմէ ետք Սեւակ Խաչատուրեան կատարեց Միացեալ Նահանգներու, Հայաստանի եւ Հ.Մ.Ը.Մ.Ի քայլերգները:

Հանդիսավար եղբ. Աւօ Պարմաքեան իր բացման խօսքին մէջ բարի գալուստ մաղթեց շուրջ 400 ներկաներուն եւ շեշտեց մարմնակրթական այս կազմակերպութեան առաքելութեան կարեւորութիւնը, իբրեւ նորահաս սերունդին հայեցի դաստիարակութիւն ջամբող եւ բարոյականի տէր մարդ պատրաստող 89ամեայ կազմակերպութիւն:

Պոսթընի մասնաճիւղին կողմէ խօսք առաւ վար-



չութեան ատենապետ եղբ. Ռազմիկ Փանոսեան: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք իրենց բարոյական եւ նիւթական աջակցութեամբ կը

նպաստեն միութեան աշխատանքներուն:

Շրջանային Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Յակոբ Իշխանեան, որ ընդգծեց Հ.Մ.Ը.Մ.Ին վստահութիւն ցուցաբերելու կարեւորութիւնը, իբրեւ մատղաշ սերունդի հայեցի դաստիարակութեան ապահով ու հոգատար միջավայր:

Շրջանի 30ամեակին առիթով Գանատայի Շրջանային Վարչութեան շնորհաւորանքները փոխանցեց եղբ. Վահան Չալիքեան: Ան յիշեցուց հիմնադրութեան առաջին քայլերը, երբ իբրեւ միացեալ շրջան միասին ճամբայ կ'ելլէին Գանատայի եւ Արեւելեան Միացեալ Նահանգներու Հ.Մ.Ը.Մ.ականները, իրենց հարազատ կազմակերպութեան հունտերը ցանելով հիւրընկալ այս նոր ափերուն վրայ:

Հայ Յեղափոխական Դաշնակցութեան շրջանի Կեդրոնական Կոմիտէին խօսքը փոխանցեց Հայկ Օշական: Ան իր խօսքին մէջ ընդգծեց հայապահպանումի ու հայակերտումի համասփիւռքեան աշխատանքին մէջ 89ամեայ այս կազմակերպութեան ունեցած անուրանալի



դերը: Ան շեշտեց նաև Սփիւռքի մէջ հասակ նետած սերունդները վերանկախացած հայրենիքին կապելու միութեան հնարաւորութիւնները: Հայկ Օշական անդրադարձաւ նաև շրջանի Հ.Մ.Ը.Մ.ի դիմագրաւած դժուարութիւններուն եւ յանուն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հաստատեց, թէ Հ.Յ.Դ.ն իր բոլոր կարելիութիւններով կ'աջակցի Հ.Մ.Ը.Մ.ին, որպէսզի այս կազմակերպութիւնը շարունակէ իր նուիրական առաքելութիւնը:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Վահրամ Դանիէլեան

շեշտեց Հ.Մ.Ը.Մ.ի համահայկական կառույցին մէջ Արեւելեան շրջանի 30ամեայ կազմակերպութեան տեղը, որ նուաճւած է անոր անդամներուն եւ համակիրներուն անխոնջ աշխատանքով: Եղբ. Դանիէլեան կոչ ուղղեց ժողովուրդին, որ իրենց մատղաշ զաւակները վստահին Հ.Մ.Ը.Մ.ին, շարունակեն գորակցիլ այս կազմակերպութեան, յանուն մեր նոր սերունդի հայեցի դաստիարակութեան:

Եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ Անուշաւան Եպս. Դանիէլեան, որ նախ փոխանցեց շրջանէն դուրս գտնուող թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյ-



Տօնակատարութեան ընթացքին խօսք կ'արտասանէ Թեմի Առաջնորդ Օշական Արք. Չոլոյեանի ներկայացուցիչ Անուշաւան Եպս. Դանիէլեան:



եանի օրհնութիւնն ու շնորհաւորանքները, ապա իր հայրական պատգամին մէջ գնահատեց ազգային մեր իրականութեան մէջ Հ.Մ.Ը.Մ.ին մատուցած անփոխարինելի ծառայութիւնը: Սրբազան Հայրը շեշտեց, թէ հայ եկեղեցւոյ եւ հայ դպրոցի

կողքին՝ Հ.Մ.Ը.Մ.ը իր մասնաճիւղերով ու ակումբներով եղաւ այն հարազատ տունը, ուր սերունդներ հայկականութեամբ գինուեցան ու կարողացան պահպանել մեր մշակոյթը, լեզուն ու պատմութիւնը:

Պաշտօնական յայտագիրէն ետք, երեկոն խանդավառեցին երգիչ Ատիա Հարմանտեան եւ իր նուագախումբը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻԱՅԵԱԿ ՆԱՀԱՆՔՆԵՐՈՒ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՅՁՐԴ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Թղթակից ՊՈՍԹԸՆ

Շրջանի հիմնադրութեան 30ամեակի հանդիսութեան զուգահեռ, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու շրջանը երեք օրերու ընթացքին գումարեց իր 32րդ Շրջանային Ներկայացուցչական Ժողովը, Հոկտեմբեր 26-28, Պոսթընի «Շերաթոն Ֆրամինկհամ» հիւրանոցին մէջ, մասնակցութեամբ շրջանի տասը մասնաճիւղերու (Ալպընի, Նիւ Եորք, Նիւ Ճըրզի, Շիքսօ, Ուաշինկթըն, Պոսթըն, Տիֆ-

րոյթ, Փրովիտընս, Ֆիլատելֆիա եւ Հարաւային Ֆլորիտա) լիազօր ներկայացուցիչներու, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան լիազօր ներկայացուցիչին եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբայր Վահրամ Դանիէլեանին, ընդհանուրը՝ 48 անդամներ: Խորհրդակցական ձայնով մասնակցողներու շարքին էին Հ.Յ.Դ. տեղւոյն Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչը, Համազգայինի եւ Հ.Յ.Դ. Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան ներկայացուցիչները, Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբայր Վահան Չալիբեան, Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Միացեալ Նահանգներու Շրջանային Վարչութեան անդամները, Շրջանային մարզական յանձնախումբի եւ Սկաուտ. որհուրդի ներկայացուցիչ-

ները եւ հրաւիրեալներ: Ժողովին հիւրաբար կը մասնակցէր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան փոխատենապետ եղբայր Գօգօ Պալեան:

Ժողովին բացումը կատարեց Շրջանային Վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբայր Վահէ Թանաշեան: Բարի գալուստի խօսքէն ետք ան խնդրեց որ ժողովը ընտրէ իր ղեկանը: Մնայուն ղեկան ընտրուեցան ատենապետներ՝ եղբայրներ Համօ Սարտարպէկեանց եւ Արա Պարսումեան, ատենադպիրներ՝ քոյր Լիզա Ջաքարեան, եղբայրներ Շանթ Ժամկոչեան եւ Կարօ Վարդանեան:

Ժողովին ընթացքին խօսքեր արտասանեցին Հ.Մ.Ը.Մ.ի Գանատայի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Վահան Չալիքեան, Համագգայինի Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ Մանուէլ Բարսեղեան, Հ.Յ.Դ. Հայ Երիտասարդաց Դաշնակցութեան ներկայացուցիչ Լորէն Տէ Սիրվա, Հ.Յ.Դ. Արեւելեան շրջանի Կեդրոնական Կոմիտէի ներկայացուցիչ Հայկ Օշական, «Հայրենիք» շաբաթաթերթի խմբագիր իրաւակ Մկրտիչեան եւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան լիազօր ներկայացուցիչ եղբայր Վահրամ Դանիէլեան: Խօսք առնողները բարձր գնահատեցին Հ.Մ.Ը.Մ.ի կարեւոր դերը հայապահպանման աշխատանքին մէջ, մանաւանդ Մ.Նահանգներու աշխատանքի միջնորդութիւն մէջ, որ կը պահանջէ յաւելեալ ճիգ եւ համբերութիւն: Անոնք յաջողութեան բարեմաղթութիւններ փոխանցեցին ժողովին մասնաւորապէս եւ Հ.Մ.Ը.Մ.ին ընդհանրապէս, որպէսզի Հ.Մ.Ը.Մ.ը մնայ պատենէի վրայ եւ շարունակէ իր ազգանուէր գործունէութիւնը:

Ժողովը առաջին հերթին ունկնդրեց տասը մասնաճիւղերու միամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրները եւ ապա՝ Շրջանային Վարչութեան միամեայ գործունէութեան նիւթաբարոյական տեղեկագիրը:

Համաձայն տեղեկագիրներու, անցնող երկամեակին, շրջանը ունեցած է բեղուն գործունէութիւն:

Ներկայիս Հ.Մ.Ը.Մ.ի Արեւելեան Մ.Նահանգներու շրջանը ունի․-

- 1200է աւելի անդամ-անդամուհիներ եւ համակիրներ:
- 450է աւելի գալլիկ, արժուիկ, արի, արենոյշ, պատանի եւ պարմանուհիներ:
- 600է աւելի մարզիկ-մարզիկուհիներ:
- 70է աւելի մարզական երկսեռ խումբեր՝ Ֆուլթայլի, վոլիպոլի, պասքեթպոլի, փինկ-փոնկի, թենիսի եւ աթլէթի, ծիւ, փոքր, կրտսեր, երէց եւ վեթերան դասակարգերով:
- Անցնող տարի, շրջանը կազմակերպած է հետեւեալները․-
- Մասնաճիւղերու վարչական կազմի ղեկաններու խորհրդաժողով, Նիւ Ճորջիի մէջ:
- Միջ-մասնաճիւղային 17րդ մարզախաղեր, Տիթրոյթի



մէջ: Այս խաղերուն մասնակցած են 550 մարզիկ-մարզիկուհիներ:

- Շրջանային սկաուտական 21րդ ընդհանուր բանակում, Ֆիլատելիոյ մէջ: Բանակումին մասնակցած են 120 սկաուտներ:

- Վերամշակուած են շրջանի Սկաուտական ներքին Մրագիր-Կանոնագիրը եւ մարզական ներքին կանոնագիրը:

- Շրջանի 31րդ Ներկայացուցչական բացառիկ ժողով,

Ալյընիի մէջ, եւ 32րդ Ներկայացուցչական ժողովը Պոսթընի մէջ:

Երեք օրերու ընթացքին, շրջանի բոլոր մասնաճիւղերէն ժամանած պատգամաւորները քննեցին ընթացաւարտ Շրջանային Վարչութեան երկամեայ գործունէութիւնը, մշակեցին յառաջիկայ երկու տարուան գործունէութեան ծրագիրը եւ ընտրեցին նոր Շրջանային Վարչութիւն:

Ժողովը լսելէ ետք ընթացաւարտ Շրջանային Վարչութեան բարոյական եւ նիւթական տեղեկագիրները եւ պատգամաւորներու կողմէ մատնանշուած դրական եւ բացասական երեսները, վարչութեան գործունէութիւնը նկատեց «Գնահատելի», նկատի ունենալով այն ծանր պայմանները, որոնց մէջ այս վարչութիւնը կը ստանձնէր իր պարտականութիւնները:

Ներկայացուցչական ժողովը շարունակեց իր աշխատանքը, մշակելով յառաջիկայ երկու տարուան մարզական եւ սկաուտական գործունէութեան ծրագիրները, յատկապէս յաջորդ տարուան միջ-մասնաճիւղային 18րդ մարզախաղերը Յուլիս 4ի շաբաթավերջին, Երեւոյթի մէջ, եւ շրջանի սկաուտական 21րդ ընդհանուր բանակումը Օգոստոսին, Փրովիտընսի մէջ:

32րդ Շրջանային ժողովի յատուկ ուշադրութեան առարկաներէն մէկն էր միութեան սկաուտական եւ դաստիարակչական ծրագիրներուն կատարելագործումը, նկատի ունենալով որ մարզական եւ սկաուտական աշխատանքային մարզերու կողքին, Հ.Մ.Ը.Մ.ին համար մեծ նշանակութիւն ունի դաստիարակչական բաժինը:

Նկատելի եւ ուրախալի երեւոյթ էր պատգամաւորներու շարքին մեծ թիւով երիտասարդ Հ.Մ.Ը.Մ.ականներու ներկայութիւնը, որ յաւելեալ յոյս կը ներշնչէ միութեան յարատեւութեան եւ հզօրացման իմաստով:

Ժողովի աւարտին ընտրուեցաւ Շրջանային Վարչութեան նոր կազմը՝ բաղկացած հետեւեալ Հ.Մ.Ը.Մ.ականներէ․- Վարուժան Ժինտոյեան, Հրաչ Մեսրոպեան, Վահէ Թանաշեան, Ռոպէրթ Քալանթարի, Արա Մարկոսեան, Լեւոն Սահակեան եւ Երան Սիմոնեան:

Ժողովը փակուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգով, Կիրակի, 28 Հոկտեմբեր 2007ի կէսօրէ ետք ժամը 4ին:



ՃԱՏՐԱԿԻ, ԼՈՂԻ, ՓԻՆԿ-ՓՈՆԿԻ ԵՒ ՊԱՍՔԵԹՊՈՒԻ ՄԻՋ-ՄԱՍՆԱԾԻԲՂԱՅԻՆ ԽԱՂԵՐ ԼԱԹԱՔԻՈՅ ԵՒ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

**Թղթակիցներ
ԼԱԹԱՔԻԱ, ԴԱՄԱՍԿՈՍ**

«**Բ**արձրացիր-բարձրացուր» նշանաբանով գործող Հ.Մ.Ը.Մ-ի նրպատակը եղած է միջմասնաճիւղային խաղերով համախմբել տարբեր մասնաճիւղերէ Հ.Մ.Ը.Մ.ական մարզիկները, անոնց մարզական ոգին զօրացնելու եւ ազնիւ մրցակցութեան վարժեցնելու համար:

Այս նպատակէն թելադրուած, Հ.Մ.Ը.Մ-ի Սուրիոյ Շրջանային Վարչութիւնը կազմակերպեց ճատրակի, լողի եւ փինկ-փոնկի միջմասնաճիւղային խաղեր, որոնք տեղի ունեցան Լաթաքի-իոյ մէջ: Յիշեալ խաղերուն մասնակցեցան Հալէպի, Քեսապի, Լաթաքիոյ եւ Գամիշլիի մասնաճիւղերէն մարզիկներ: Լողի մրցումներուն պատասխանա-



տրուութիւնը ստանձնեց Լաթաքիայէն եղբ. Մովսէս Կարապետ: Մրցումը տեղի ունեցաւ տեղւոյն մարզական աւանի ձմեռնային լողաւազանը: Սուր մրցակցութենէ ետք, աղջկանց խումբէն առաջին հանդիսացաւ Հալէպէն քոյր Նայիրի

Տէլիքտէրեան, երկրորդ հանդիսացաւ Գամիշլիիէն քոյր Ռուբինա Կոտոշեան, իսկ տղոց խումբէն առաջին հանդիսացաւ Լաթաքիայէն եղբ. Քրիստ Խալոյեան, երկրորդը՝ դարձեալ Լաթաքիայէն եղբ. Սարգիս Կարապետ:



Ճատրակի մրցումին պատասխանատուութիւնը ստանձնեց Շրջանային Վարչութեան եղբ. Պատրիկ Զրաքեան, օգնականներ ունենալով Հայկական քոյր Նուշիկ Սիւլիքեանը եւ եղբ. Վաչէ Քոչոյեանը: Մրցումը տեղի ունեցաւ ակումբի շրջափակին մէջ: Երէցներու խումբէն առաջին հանդիսացաւ Հայկական եղբ. Արա Ապաճեան, իսկ կրտսերներու խումբէն առաջին հանդիսացան Հայկական քոյր Նուշիկ Պարտազեան եւ քոյր Դալար Թանաշեան:

Փինկ-փոնկի մրցումներուն պատասխանատուութիւնը ստանձնեց Գամիշիկէն եղբ. Քրիստափոր Աբրահամեան: Մրցումը տեղի ունեցաւ ակումբին սրահը: Մրցումին աւարտին առաջին հանդիսացաւ Հայկական եղբ. Յակոբ Մանուկեան:

Արդիւնքները յտականալէ ետք, Շրջանային Վարչութեան եղբ. Արմէն Քէօզկէրեան շնորհակալութեան խօսք ուղղեց Լաթաքիոյ մասնաճիւղի վարչութեան՝ իր ջերմ ընդունելութեան համար: Ան նաեւ շնորհակալութեան յատուկ խօսք ուղղեց մասնակից մարզիկներուն, որոնք Հ.Մ.Ը.Մ.ականի բարձր գիտակցութեամբ նպաստեցին ձեռնարկին յաջողութեան: Ապա, իւրաքանչիւր մարզիկի տրամադրուեցաւ յիշատակի մետալ մը, որմէ ետք տեղի ունեցաւ բաժակներու տուչութիւն:

Միջ-մասնաճիւղային այս հանդիպումը վերջ գտաւ «Յառաջ նահատակ» քայլերգով:



ՊԱՍՔԵԹՊՈԼԻ ՄՐՑԱՇԱՐՔ՝ ԴԱՄԱՍԿՈՍԻ ՄԷՋ

Ճատրակի, լողի եւ փինկ-փոնկի միջ-մասնաճիւղային խաղերուն հետեւողութեամբ, Շրջանային Վարչութեան կազմակերպութեամբ տեղի ունեցան նաեւ

պասքեթպոլի միջ-մասնաճիւղային խաղեր, այս անգամ Դամասկոսի մէջ:

Խաղերուն բացումը կատարելով, Շրջանային Վարչութեան անդամ եղբ. Մովսէս Քէօզկէրեան շնորհակալութիւն յայտնեց ներկաներուն, որոնք իրենց





անձնական հանգիստը ձգած՝ նուիր-
ւած են միութեան բարգաւաճման:
Ապա ան յաջողութիւն մաղթեց մար-
զիկներուն՝ թեյադրելով որ մարզական
ոգիով եւ Հ.Մ.Ը.Մ.ականի բարձր գի-
տակցութեամբ մրցին՝ հասնելու համար
բարձրագոյն դիրքին:

Պասքեթպոլի առաջին խաղը տեղի
ունեցաւ Դամասկոսի եւ Գամիշլիի
խումբերուն միջեւ եւ վերջ գտաւ 53-62
արդիւնքով՝ ի նպաստ Դամասկոսի
խումբին:

Կէսօրուան ճաշէն եւ դադարէն ետք
տեղի ունեցաւ երկրորդ մրցումը՝ Հալէ-
պի եւ Գամիշլիի խումբերուն միջեւ:
Մրցումը աւարտեցաւ 80-64 արդիւնքով,
ի նպաստ Հալէպի խումբին: Այսպէսով
Գամիշլիի խումբը հանդիսացաւ մրցա-
շարքին երրորդը: Նշելի է, որ Հալէպի
մասնաճիւղը խաղերուն մասնակցեցաւ
կրտսերներու խումբով:

Դամասկոսի համակիրները հոծ բազ-
մութեամբ ներկայ գտնուեցան եզրա-
փակիչ խաղին, որ տեղի ունեցաւ Հալէ-
պի եւ Դամասկոսի խումբերուն միջեւ:
Յետ բուն մրցակցութեան, խաղը վերջ
գտաւ 62-80 արդիւնքով, ի նպաստ Դա-
մասկոսի խումբին, որ հանդիսացաւ
առաջին, իսկ Հալէպի խումբը՝ երկ-
րորդ:

Շրջանային Վարչութեան ձեռամբ
բոլոր մարզիկները ստացան յատուկ
շքանշաններ, իսկ խումբերը՝ բաժակ-
ներ: Շրջանային Վարչութիւնը բաժակ-
ներով պատուեց մրցաշարքի տիպար
մարզիկը՝ Դամասկոսէն եղբ. Գօգօ Գոճ-
եանը եւ ամէնէն շատ կէտ արձանագրո-
ղը՝ Հալէպէն եղբ. Սեպուհ խառնաճեանը:

Աւարտին, Շրջանային Վարչութեան
ատենապետ եղբ. Բաֆֆի Տէր Աբրա-
համեան իր փակման խօսքին մէջ շնոր-
հակարութիւն յայտնեց Դամասկոսի
վարչութեան՝ իր ջերմ ընդունելութեան
եւ հիւրասիրութեան համար, ապա նշեց
Հ.Մ.Ը.Մ.ի դերը սերունդներու ազգա-
յին առողջ դաստիարակութեան մէջ:

Հանդիսութիւնը փակուեցաւ «Յա-
ռաջ նահատակ» ֆայերբոլով:

**Հ.Մ.Ը.Մ.ի Գամիշլիի,
Դամասկոսի եւ Հալէպի
(կրտսերներ) պասքեթպոլի
խումբերը:**



Հ.Մ.Ը.Մ.Ի ՍՈՒՐԻՈՅ ՄԱՍՆԱԾԻՒՂԵՐՈՒ 15ՐԴ ԽՄԲԱՊԵՏԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ

Թղթակից
ՅԱԼԷՊ

Հ-Մ.Ը.Մ.Ի Սուրիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդին կազմակերպութեամբ, Սուրիոյ մասնաճիւղերու 15րդ խմբապետական ժողովը տեղի ունեցաւ «Արամ Մանուկեան» Ժողովրդային Տան «Լեւոն Շանթ» կեդրոնին մէջ, մասնակցութեամբ Հ.Մ.Ը.Մ.Ի Լաթաքիոյ, Քեսապի, Դամասկոսի եւ Հալէպի մասնաճիւղերու ներկայացուցիչ քոյր-եղբայրներուն: Ժողովին ներկայ էր նաեւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդը լման կազմով: Ժողովին այցելեց Շրջանային Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Արմէն Քէօզկէրեան:



Ժողովը բացուեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգով: Շրջանային խմբապետ Եղբ. Լեւոն Իսկէնտէրեան կատարեց բացման խօսքը: Իսկ Շրջանային Խմբապետուհի Քոյր Քնար Ղազարեան ընթերցեց Շրջանային Սկաուտ. Խորհուրդի միամեայ գործունէութեան տեղեկագիրը: Ապա իւրաքանչիւր մասնաճիւղի ներկայացուցիչ ընթերցեց իր մասնաճիւղի միամեայ գործունէութեան տեղեկագիրը եւ վեցամսեայ ծրագիրը, որմէ ետք խօսուեցաւ կազմակերպչական ներքին հարցերու մասին: Դաստիարակչական եւ հրատարակչական բաժինները կը գրաւէին օրակարգի կարեւորագոյն եւ հիմնական բաժինները: Այս խմաստով խօսուեցաւ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի հրատարակած «Սկաուտի Զայն» եւ «Մոկլի» թերթերուն, ինչպէս նաեւ՝ գայլիկներու համար ընթացքի մէջ եղող «գիծ եւ գոյն» գրքոյկի հրատարակութեան մասին:

Սկաուտական գիտելիքները ամրապնդելու եւ զանոնք նորահաս սերունդին լաւ ձեւով մատուցելու համար աշխատանքներ պիտի տարուին՝ զանոնք վերամշակելու եւ աւելի մատչելի դարձնելու համար: Ծրագրուած է համացանցի վրայ կայքէջ մը պատրաստել՝ սկաուտական գիտելիքները եւ սկաուտները յուզող հարցերը հոն արծարծելու համար: Նաեւ խօսուեցաւ սկաուտական գրադարանի մը ստեղծման մասին, ուրկէ կարենան օգտուիլ աստիճանաւոր քոյրերն ու եղբայրները:

Թելադրուեցաւ բոլոր կարգերու համար օգտագործել թէ՛ գայլիկական եւ թէ՛ սկաուտական գիրքերը, իւրաքանչիւրը իր կարգին համապատասխան: Վերջերս հրատարակուած ըսկաուտական կանչերու գրքոյկի կողքին կը մտածուի հրատարակել սկաուտական երգարան մը:

Աստիճաններու եւ կարգերու կապակցաբար որոշուեցաւ թեկնածու քոյր-եղբայրները իրենց երդումէն կամ խոստումէն ետք օժտուին սկաուտական կարգերով ու աստիճաններով, ապա այդ կարգերուն եւ աստիճաններուն համապատասխան պէճեր կրեն:

Քարոզչական ծիրէն ներս որոշուեցաւ շարունակել զարկ տալ հրապարակային ձեռնարկներու, անոնց կողքին հրատարակելով սկաուտական թերթիկներ, պրակներ, որմագղներ եւ այլն:

Տեղական սկաուտական ֆետերասիոնի կապակցութեամբ որոշուեցաւ զարկ տալ եւ քաջալեր հանդիսանալ սկաուտական տեղական խորհուրդներուն՝ իրենց անմիջական մասնակցութիւնը բերելու Սուրիոյ պետական սկաուտական ֆետերասիոնի կազմակերպած բոլոր ձեռնարկներուն:

Ժողովի աւարտին խօսք առաւ Սուրիոյ Շրջանային Սկաուտ. Խորհուրդի ատենապետ եղբ. Մանուկ Քէօզկէրեան: Ան նախ շնորհակտեց մասնակիցները սկաուտութեան հիմնադրութեան 100ամեակին եւ Հ.Մ.Ը.Մ.Ի 89րդ տարեդարձին առիթներով: Ապա, գնահատելով ներկաները իրենց անսակարկ նուիրումին համար, ան բոլորին թելադրեց ըլլալ տիպար, վստահուած գործը եւ պարտականութիւնը իրագործել անվերապահ կերպով, յանուն մեր ապագայ սերունդի առողջ դաստիարակութեան:

Ժողովը փակուեցաւ «Ով հայ արի» քայլերգով:



ԱՄՄԱՆԻ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԴՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆԸ

Ալին Պէննէեան ԱՄՄԱՆ

Հ.Մ.Ը.Մ-ի Ամմանի սկաուտական կազմը անցնող տարեշրջանի իր գործունէութիւնը փակեց մասնաճիւղի տարեկան երդման արարողութեամբ:

Հանդիսութեան ներկայ էին Հ.Մ.Ը.Մ-ի եւ ՀՕՄի վարչութիւնները, Հ.Մ.Ը.Մ-ի նախկին ատենապետները եւ խմբապետները, ծնողներ եւ միութեան անդամներն ու համակիրները:

Տարեկան երդման արարողութիւնը աւիթ էր վերլիշելու տարուան մը աշխատանքը եւ կակուղ թաթիկ, գայլիկ-արծւիկներէն մինչեւ կազմի խմբապետները գնահատելով՝ անցնելու յաջորդ տարեշրջանի աշխատանքին:

Շեփորախումբի եղանակներով, օրուան հանդիսութիւնը սկսաւ մասնաճիւղի 82 հոգինոց սկաուտական կազմին տո-

ղանցքով: Ապա, սկաուտներուն կողմէ խօսքեր արտասանեցին քոյր Օրելի-Արաքս Անտոնեան (Հայերէն) եւ քոյր Ռանիա Խանոյեան (արաբերէն): Անոնք իրենց խօսքերուն մէջ անդրադարձան Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտութեան դերին եւ սերունդէ սերունդ յարատեւութեան եւ ծառայութեան երեւոյթին:

Օրուան հանդիսավար եղբ. Ճորճ Ընդապապեան կազմին կրտսերագոյն անդամները հրաւիրեց տալու Հ.Մ.Ը.Մ-ականի իրենց առաջին խոստումը, առաջնորդութեամբ գայլիկական բաժնի խմբապետ եղբ. Բաֆֆի Չաքմաքեանի:

Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Նշան Սիւճեան խմբապետութեան կողմէ պատրաստուած յատուկ նուէրներով գնահատեց բոլոր պատասխանատուները՝ իրենց յարատեւ աշխատանքին եւ գոհաբերութեան համար:

Մասնաճիւղի խմբապետուհի քոյր Ալին Պէննէեան իր խօսքին մէջ շեշտը դրաւ պատասխանատու կազմի նուիրեալ աշխատանքին վրայ, որուն ամէնէն կարեւոր յատկանիշն է յարատեւութիւնը եւ շարունակական գործունէութիւնը՝ միութեան գաղափարաբանութիւնը, պարտականութեան ոգին եւ գործը փոխանցելու համար նոր սերունդին: Ան անդրադարձաւ խմբապետներու ուսերուն դրուած ծանր պատասխանատուութեան՝ վեհ նկարագրի տէր անհատներ պատրաստելու գործին մէջ:

Օրուան հանդիսութիւնը ընդգրկեց նաեւ աստիճանատուչութիւն, ինչպէս նաեւ սկաուտական Ա. եւ Բ. կարգի պէճերու տուչութիւն: Վկայագիրներով գնահատուեցան լաւագոյն գայլիկ-սկաուտները, կազմի տիպար անդամները եւ լաւագոյն խմբակները:

Նոյն օրը, փոխ խմբապետ եղբ. Մասիս Կիւլոյեանի եւ Առաջնորդ քոյր Լուսին Գուլաքսըզեանի կողմէ մասնաճիւղին շեփորախումբի անդամները ստացան յատուկ պէճեր:

Յաջորդեց տողանցքը, որմէ ետք սահիկներով ցուցադրու-



ւեցաւ 2003-2007 տարեշրջաններու սկստական գործու-նէութիւնը:

Արարողութիւնը չփակուած, կարգացուեցաւ նամակ մը՝ ստացուած մասնաճիւղի նախկին խմբապետ, այժմ Ֆրէզնօ հաստատուած եղբ. Վիգէն Եփրեմեանէն: Եղբայրը 500 տոլար

կը նուիրէր կազմին գնահատելի աշխատանքին եւ մասնաճիւղի նախկին ատենապետ եղբ. Էլի Պէննէեանի Հ.Մ.Ը.Մ.ի «Ծառայութեան» շքանշանով պարգեւատրման առիթով:

Տպաւորիչ արարողութիւնը փակուեցաւ «Յառաջ նահատակ»ով:

ԱՄՄԱՆԻ ՄԿԱՌԻՏՆԵՐԸ ԿՐ ԿԱՏԱՐԵՆ ԶՐԱՐՇԱՒ, Կ'ԱՅՅԵԼԵՆ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ ԵՒ ՅԱՏՈՒԿ ԽԱՂԱՎԱՅՐ

Նաթալի Գուլաքսրզեան ԱՄՍԱՆ

Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի մասնաճիւղի սկստական կազմը 2007-2008 տարեշրջանը սկսաւ մեծ թափով, տարեկան երգման արարողութեան եւ բանակումի կողքին կազմակերպելով յատուկ ձեռնարկներ՝ Ա. եւ Բ. կարգի սկստաներու գայլիկակալութեան մտնելուն և պատասխանատու կազմին համար:

Սեպտեմբերէն Նոյեմբեր ամիսներուն, խմբապետական կազմը ծրագրեց շարք մը ձեռնարկներ՝ կազմի անդամներուն գիտելիքներ փոխանցելու, բնութեան մէջ գործնական աշխատանքներ ունենալու, ՉՆՐԳ դարու նորութիւններուն հետ քայլ պահելու եւ Յորդանանի տեսարժան վայրերուն ծանօթանալու համար:

Ձեռնարկներէն առաջինը՝ պտոյտ-ջրարչաւ մը դէպի Ուատի Մոսթէպ գետ, Ամմանէն 1 ժամ հեռու, Մեռեալ Ծովու շրջանը, տեղի ունեցաւ Դեկտեմբերին: Պատասխանատու կազմին կողքին այս պտոյտ-ջրարչաւին մասնակցեցան Ա. եւ Բ. կարգի սկստաներ: Արշաւը տեղի ունեցաւ ջուրի մէջ: 30 հոգի գետին 4 քլմ. ը լողալով կտրեցին՝ մասնագէտ մարզիչներու հսկողութեամբ:



Նոյն վայրը կ'օգտագործէ Յորդանանի բանակը փորձերու համար: Մասնակցողները պէտք ունէին ուշադրութեան եւ չարքաշուութեան: Անոնք պարաններ օգտագործելով լողացին գետի հոսանքին դէմ եւ իրարու օգնեցին, որպէսզի բարձրանան ջրվէժ եւ ապա վերադառնան 4 ժամուան ընթացքին:

Բոլորը լաւ ժամանակ անցուցին... թաց եւ յոգնած վերջացուցին արշաւը, աւելի դժուար եւ երկար տեւողութեամբ նման արշաւ մը կրկնելու յոյսով:

Նոյեմբերին, սկստական բաժանմունքը օր մը անցուց Յորդանանի ըմբշամարտի կեդրոնը, ուր բաւական թիւով արի-արենոյշներ լաւ արդիւնքներ արձանագրեցին:

ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒ ՁԵՌՆԱՐԿՆԵՐ

Վերջին քանի մը ամիսներուն գայլիկական բաժանմունքին գործունէութիւնը ընդգրկեց նոր եւ գրաւիչ ձեռնարկներ, ինչպէս՝ այցելութիւն Միջին Արեւելքի փոքրերու ամէնէն արդիական թանգարանը, որ բացուած է Յորդանանի Ռանիա թագուհիին կողմէ: Գայլիկ-արծուիկները նաեւ ունեցան իրենց յատուկ արշաւը՝ չարքաշուութեան վարժեցման խաղավայրի մը մէջ: Նոյն օրը անոնք առիթը ունեցան ձի հեծնելու եւ խանդավառ տրամագրութիւններով իրենց տունները վերադառնելու:





ՀԱՆԴԻՊՈՒՄ ` ՀԱՅԿԱԿԱՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵՆԷՆ ՎԵՐԱՊՐԱԾ 107 ՏԱՐԵԿԱՆ ԾԵՐՈՒՆԻԻ ՄԸ ՀԵՏ

Աստղիկ Գարագաշեան ԱՄՄԱՆ

Աշխատանքներու, ժողովներու եւ ձեռնարկներու կողքին, Հ.Մ.Ը.Մ.ի Ամմանի մասնաճիւղի աստիճանաւորները անցնող ամիսներուն յիշատակելի հանդիպում մը ունեցան Հայկական Ցեղասպանութենէն վերապրած 107 տարեկան ծերունիի մը հետ:

Ծերունիին բնակարան այցելութիւնը եղաւ յուզիչ, տպաւորիչ եւ դաստիարակիչ: Միսաք Աւետիսեան Յորդանան կը բնակի 1948էն ի վեր, սակայն ան բնաւ չփում չէ ունեցած գաղութի անդամներուն կամ միութիւններուն հետ: Դժուար պայմաններու մէջ, ընտանիք ապրեցնելու հոգով տարւած, ան մօտ 40 տարի փողոցէ փողոց քայլելով եղած է Ամմանի առաջին կարկանդակ ծախսողը:



Երիտասարդութեան, Ամման չփոխադրուած, Պաղեստինի մէջ արաբ օրիորդի մը հետ պսակուելէ ետք, ան տարիներ հայերէն չէր խօսած: Երբ Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտները իր բնակարանը մտան, ծերունի Միսաք սկիզբը շատ չխօսեցաւ, սակայն երբ հետաքրքրութեամբ հարցուցինք իր կեանքին պատմութիւնը, ան կամաց-կամաց, յուզումով եւ կրկին հայեր տեսնելու ուրախութեամբ, պատմեց իր յիշատակները: Երգերէ ու կանչերէ ետք, Միսաք ինքն ալ երգելու սկսաւ, իր արաբախօս թոռնիկներուն ներկայութեամբ ըսելով թէ որքա՛ն հպարտ է հայ ծնելուն համար: Հակառակ որ ան կը փորձէր Ցեղասպանութեան մասին շատ չխօսիլ, սակայն կարողացանք Վանէն Պասրա (Իրաք) իր տարագրութեան մասին խօսիլ: Ցեղասպանութեան նախօրեակին, անոր հայրը գացած էր բանակ, այգեստաններով լեցուն Վանի Դատուան գիւղէն: Ան պատմեց մօրը հետ երկար ճամբորդութեան մասին, թէ ինչպէս կրտսեր եղբայրները ճամբան մահացան, մայրը հիւանդ ու տկար՝ անգլիացիներու Պասրայի հիւանդանոցին մէջ մահանալէ ետք, ան կ'անցնի Երուսաղէմ եւ կը մնայ որբանոց, մինչեւ 1948ի պատերազմը եւ Ամման փոխադրուիլը:

Ծերունի Միսաք համոզուած էր, որ ողջ մնալը հրաշք էր: Ան ուզած էր կեանքը նուիրել Աստուծոյ եւ եկեղեցիին: Ան



Մասնաճիւղին աստիճանաւոր պատասխանատուները Միսաք Աւետիսեանի բնակարանը այցելութեան ժամանակ:

մեզի ցոյց տուաւ հայերէն կարգ մը գրութիւններ, ուր ան Սուրբ Գիրքը եւ իր սիրած հայերէն երգերը քանի մը անգամ ընդօրինակելով փորձած էր չմոռնալ հայերէն գրելը: Երուսաղէմի վանքին մէջ ան սորված էր իտալերէն, լատիներէն, ֆրանսերէն եւ անգլերէն:

Ան նաեւ պատմեց, թէ երբ Ամման փոխադրուեցաւ ի՛նչ փոքր գիւղ մըն էր շրջանը եւ թէ ինչպէս արաբերէն խօսիլը եւ սորվիլը մեծ դժուարութիւն էին իրեն համար:

Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտները ծերունի Միսաքին այցելեցին երեք անգամ: Իւրաքանչիւր անգամուն կ'ողգէինք տարբեր սկառուտներ տանիլ այցելութեան: Սակայն, յոգնած ծերունիին առողջութիւնը երկար չդիմացաւ: Վերջին այցելութեան ան անկողինն էր արդէն: Օրեր անցած էր եւ չէր ուտեր, աչքերը բացաւ միայն երբ հայերէն լսեց... ցաւի մէջ էր: 10 օր ետք տառապանքէն հանգստացաւ:

Թաղումին զգացինք թէ Հայկական Ցեղասպանութեան վերջին վկաներէն մէկն ալ գնաց: Իր գաւակները եւ թոռները կազմակերպեցին արաբերէնով թաղման արարողութիւն, որմէ ետք Հ.Մ.Ը.Մ.ի սկառուտները զգացին թէ հայերէնով «Հայր Մեր» մը տեղին էր:

Բոլորս կարծես մեծ հայր մը, նոր բարեկամ մը, հայոց արդի պատմութեան վկայի մը ծանօթացած էինք եւ, սակայն, շատ շուտ կորսնցուցած:

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Շարունակուած՝ Բ. կողքէն

Գ. ՄԱՐՁԱԿԱՆ

Մարմնակրթանքը մարզախաղերով կիրարկելու ու ազգային ոգի թրծելու նպատակադրութենէն առաջնորդուած՝ եզրակացուեցաւ այս քառամեակի համա-Յ.Ս.Ը.Ս.ա-կան մարզախաղերը իրականացնել նախընտրաբար Ազատ, Անկախ Արցախի Հանրապետութեան հողին վրայ:

Շրջաններէն ներս ըստ հնարաւորութեան եւ կարելիութեան կիրարկել զանազան մարզախաղեր եւ արհեստավարժ կացութենէն վերջնականապէս դուրս գալու տրամաբանութեամբ ստեղծել դպրոցներ, ուր փոքր տարիքէն մարզիկ-մարզիկուհիներ պատրաստել ըստ իրենց կիրարկած մարզաձեւին:

Համահայկական խաղերուն մասնակցիլ աւելի մեծ թիւով, բոլոր մարզախաղերուն հաւասարապէս:

Դ. «ՄԱՐՁԻԿ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹ

Միութեան գաղափարաբանութիւնը արտայայտող եւ Հայ ժողովուրդի ձգտումներուն մէկ փարոսը եղող «Մարզիկ» պաշտօնաթերթը տարածելու հրամայականէն թելադրուած՝ անխուսափելի համարուեցաւ «Մարզիկ»-ին մատակարարել բարոյական եւ նիւթական աջակցութիւն:

Սփիւռքի որոշ շրջաններուն համար խմբագրականները թարգմանել՝ օտար լեզուով հասկնալի դարձնելու համար բոլորին:

Ե. 90ԱՄԵԱԿ

2008ին շրջաններէ ներս փառաշուք հանդիսութեամբ տօնակատարել Հայաստանի առաջին անկախութեան եւ Յ.Ս.Ը.Ս.ի հիմնադրութեան 90ամեակները, հանրութեան եւ օտարներուն աւելի ծանօթացնելով Յ.Ս.Ը.Ս.ի ազնիւ գաղափարախօսութիւնը եւ հայ ժողովուրդի անհերքելի պահանջատիրութիւնը:

90ամեակի ծիրէն ներս, որոշուեցաւ Նոյեմբեր 2008ին Հայաստանի մէջ կայացնել Յ.Ս.Ը.Ս.ի հիմնադրութեան 90ամեակին նուիրուած գիտաժողով մը, որուն իրենց մասնակցութիւնը պիտի բերեն գիտնականներ, խմբագիրներ եւ դասախօսներ, պետական մակարդակի հրաւիրեալներու կողքին: Նոյնպէս, որոշուեցաւ Հայաստանի մարզական լրագրութեան



Հ.Ս.Ը.Ս.ի Կեդրոնական Վարչութեան անդամները
Հ.Ս.Ը.Ս.-Ֆրանսի վարչութեան հետ:

մէկ լսարանը վերանորոգել եւ կոչել «Շաւարշ Քրիսեան» լսարան, նաեւ աշխատանք տանիլ Յ.Ս.Ը.Ս.ի հիմնադրութեան 90ամեակը յատկանշող դրոշմաթուղթ մը ունենալու համար:

Զ. ԿԱՅՔԷԶ

Արդի հաղորդակցութեան արագընթաց պայմաններէն օգտուելու համար, նպատակայարմար նկատուեցաւ նորագոյն միջոցներով օժտել միութեան համացանցի կայքէջին կարելիութիւնները, զարգացնելու համար միութեանական կապերը:

Է. ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԵՐ

Ընդհանուր սկզբունքներէ մեկնած եւ ծրագրուած աշխատանքները լաւագոյնս իրագործելու եւ յաջողցնելու հեռանկարով, որոշուեցաւ գործել յանձնախումբերու դրութեամբ, որոնք իրենց մասնագիտութեամբ ու փորձառութեամբ, ձեռնարկներէն առաջ կեանքի կոչուելով, պիտի կարենան կազմակերպել ու վարել ճշդուած գործունեութիւնը:

Քառամեայ ծրագրի իւրաքանչիւր ձեռնարկի յաջողութիւնը կը վստահուի Յ.Ս.Ը.Ս.ի ամբողջ ընտանիքին, որուն դափնեպսակն է իր յաւերժահնչիւն եւ յաւերժապանօ նշանաբանը՝ «Բարձրացի՛ր-բարձրացո՛ւր»:

9 Դեկտեմբեր 2007



Հ.Մ.Ը.Մ.Ի ԳԱՅԼԻԿՆԵՐՈՒ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԱԹԷՆՔԻ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

Ֆայկան Չարճաքճեան Լոռի Պարագեան ԱԹԷՆՔ

25 Նոյեմբեր 2007ի առաւօտեան, Հ.Մ.Ը.Մ.ի Աթէնքի եւ Գոքինիոյ սկաուտական մասնաճիւղերու գալլիկներն ու արժուիկները, 7-12 տարեկան, իրենց պատասխանատու խմբապետներուն հետ այցելեցին Աթէնքի Մանկական Թանգարան: 35 գալլիկ-արժուիկներ, 6 փոխ խմբապետներու եւ խմբապետներու ընկերակցութեամբ, մեկնեցան Փլաքայի շրջանը, Քիտաթինէն փողոցին վրայ գտնուող Մանկական Թանգարանը: Երկու ժամուան այցելութեան ընթացքին գալլիկները երեք խումբի բաժնուելով շրջեցան եւ զբոսեցան թանգարանին մէջ ցուցադրուած իրերով:

Նշեմք, թէ Մանկական Թանգարանը մեզի ծանօթ թանգարաններէն կը տարբերի այն իմաստով, որ փոքրերը հոն առի-

թը կ'ունենան տարբեր գիտելիքներ սորվելու, հետազօտելու, շօշափելու եւ ստեղծագործելու: Թանգարանը կը բաղկանայ գանազան սրահներէ, իւրաքանչիւրը տարբեր նիւթի մը յատկացած ըլլալով, ինչպէս՝ «Մարդակազմութիւն», «Ծովու յատակի հարստութիւն», «Պղպղակներու սենեակ», «Վերնատուն», «ըՍտւերներու սենեակ» եւ «Խոհանոց»: Գալլիկները մեծապէս տպաւորւեցան «Խոհանոց»էն, ուր խմորեղէններ պատրաստեցին, եփեցին ու համտեսեցին:

Այցելութենէն վերջ, բոլոր գալլիկները հաւաքաբար ճաշելէ ետք, վերադարձան Ֆիքսի «Արամ Մանուկեան» եւ Գոքինիոյ «Զաւարեան» սկուօմբները:



Հ.Մ.Ը.Մ.Ի ԵՐԷՅ ՄԿԱՌԻՏՆԵՐՈՒ ԱՐՇԱՒ-ՔՆՆՈՒԹԻՒՆ

Լոռի Պարագեան ԱԹԷՆՔ

Հ .Մ.Ը.Մ.ի Յունաստանի Շրջանային Սկաուտ-Խորհուրդի կազմակերպութեամբ, տարիէ մը ի վեր ձեռնարկուած է սեմինարներու շարքի մը՝ Աթէնքի եւ Գոքինիոյ երէցական փաղանգներուն համար:

Շաբաթ 10 եւ Կիրակի 11 Նոյեմբերին այս նպատակով կազմակերպուեցաւ արշաւ մը Այ Անտրէյայի յունական արեւուշական բանակավայրին մէջ: Արշաւին նպատակն էր կատարել քննութիւն մը, որուն ընթացքին երէցները պիտի ներկայացնէին իրենց սորված գիտելիքները նախորդ սեմինարներէն: Իսկ քննութեան նպատակն էր առիթ մը տալ երէցներուն եւ աստիճանաւորներուն, յետ քննութեան իրենց առաջին մակարդակի օղակը ստանալու:

Երկօրեայ այս արշաւին, բացի երէցներէն, մասնակցեցան նաեւ փոխ խմբապետներ եւ խմբապետներ, Աթէնքի եւ Գոքինիոյ սկաուտական մասնաճիւղերէն: Մասնակցողներուն ընդհանուր թիւն էր 20:

Հ.Մ.Ը.Մ.ական քոյրեր ու եղբայրները բաժնուեցան 4 տարբեր խումբերու եւ ներկայացուցին իրենց խմբապետներէն պահանջուած յայտագիրը:

Երէցներն ու խմբապետները բանակավայր ժամանեցին Շաբաթ երեկոյեան

ժամը Ցին: Իրենց կը սպասէին Հ.Մ.Ը.Մ.ի Շրջանային Սկաուտ. Խորհուրդի անդամներ:

Օրուան յայտագիրը սկսաւ «Նախնական օգնութիւն» նիւթով: Խումբերը ներկայացուցին Ֆիզիքական կոտորտակներու, մարմնային վնասուածքներու, սրտի կաթնաւանդներու, գլխահոսքի, պաղառութեան եւ ուշաթափութեան դէպքեր, պարագաներ ու անոնց արագ եւ անմիջական դիմադրութեան ձեւեր:



Աւելի ուշ, յաջորդեց խարուկահանդէս՝ երգերով ու հաճելի մթնոլորտով: Գիշերը տեղի ունեցաւ պահակութիւն:

Յաջորդ օր, Կիրակի առաւօտեան, նախաճաշէն ետք, 4 անջատ խումբերը պատրաստեցին արագ ճանապարհորդութեան, զանազան վայրերու մէջ թա-

փօրներ կազմելու մասնագիտական քարտէսագրութիւն: Ապա յաջորդեց գիտելիքներու հարցում-պատասխանի հաճելի խաղը:

Կէսօրուան ճաշին համար իւրաքանչիւր խումբ շաղեց ու պատրաստեց իր հացն ու բրինձը:

առօրեայ կեանքին մէջ:

Շարաթ իրիկուան եւ Կիրակի օրուան արշաւին ճաշերը հոգացին Աթէնքի եւ Գոքինիոյ մասնաճիւղերու խորհուրդներու տիկինները:

Արշաւ-քննութիւնը իր աւարտին հասաւ աւանդական դրօշակի էջքով:

Շարունակելով, երէցներն ու փոխ խմբապետները ներկայացուցին տողանցքի զանազան ձեւեր, սկաուտական հրահանգներ զաւազաններով, ինչպէս նաեւ խոստման, երգման եւ փոխանցման արարողութիւններու ձեւեր:

Օրուան աւարտին, իւրաքանչիւր խումբ ներկայացուց երեք նոր հանգոյցներ, որոնք օգտակար կրնան դառնալ սկաուտական



Travel Ways - Egypt

NILE CROCODILE CRUISES



Incoming Tour Operator
Hotel & Cruise Reservation
Transportation
Excursions

Attia el Sawalhy St., Serag Center Tower#1
from Makram Ebeid- Nasr City, Cairo, Egypt
Tel:02 2739400/500/600
www.travelways-egypt.com
marketing@twaysegy.com

ՀԵՔԻԱԹ

ԲԱՐԵԿԵՆՆԴԱՆԸ

Ժամանակին այր մը եւ կին մը կային: Այս այրն ու կինը զիրար չէին հաւնէր: Իրարու «յիմար» կ'ըսէին եւ միշտ կը կռուէին:

Օր մըն ալ մարդը քիտներով իւղ եւ բրինձ կը գնէ, բեռնակիրի մը շալակը կու տայ եւ կը տանի տուն:

Կինը կը բարկանայ.

- «Յիմա՛ր ես» որ կ'ըսեմ, չես հաւատար. այսքան իւղ ու բրինձ ինչո՞ւ մէկ անգամէն առեր, բերեր ես, հօրդ հոգեճա՞ջը պիտի ընես, թէ տղուդ հարսանիքը:

- Ի՞նչ հոգեճաշ, կի՛ն, ի՞նչ հարսանիք. ինչե՛ր կ'ըսես դուն: Տար, պահէ՛, Բարեկենդանին համար է:


Կինը կը հանդարտի, կը տանի կը պահէ իւղն ու բրինձը:

Ժամանակ կ'անցնի: Կինը կը սպասէ, կը սպասէ՝ Բարեկենդանը չի գար: Օր մըն ալ, տան սեմին նստած ատեն, կը տեսնէ մարդ մը, որ արագ-արագ կ'անցնի փողոցէն: Ձեռքը կը դնէ ճակատին ու կը կանչէ.

- Եղբա՛յր, եղբա՛յր, վայրկեան մը կեցի՛ր:

Երիտասարդը կը կենայ:

- Եղբա՛յր, բարեկենդանը դուն չե՞ս:



- Ան ունիմ ըսելիք, թէ մենք քու ծառաներդ չենք, որ քու իւղդ ու բրինձդ պահենք:

Չի՞ բաւեր այսքան ատեն պահեցինք...: Չե՞ս ամչնար...: Ինչո՞ւ չես գար ապրանքդ չես տանիր...:

- Ինչո՞ւ պարապ տեղ սիրտ կը հատցնես, քոյրիկ, ես ալ ճիշդ ատոր համար եկած եմ, ձեր տունը կը փնտռէի եւ չէի գտներ:

- Հա՛ւ ուրեմն եկո՛ւր

տար:

Երիտասարդը իւղն ու բրինձը կը շալկէ եւ կը մեկնի իրենց գիւղը:

Ամուսինը տուն կու գայ, կինը կ'ըսէ.

- Հա՛, Բարեկենդանը եկաւ, իր ապրանքը տուի իրեն՝ գնաց:

- Ի՞նչ Բարեկենդան, Ի՞նչ ապրանք:

- Իւղը, բրինձը: Մէյ մըն ալ տեսայ հեռուէն կու գայ, մեր տունը կը փնտռէր. կանչեցի, լաւ մը խայտառակեցի, բեռը կռնակը տուի եւ ղրկեցի:

- Վա՛յ քու տունդ քանդուի. «յիմար ես» որ կ'ըսեմ՝ յիմար ես... Ո՞ր կողմը գնաց:

- Ա՛յն կողմը:

Մարդը ձի կը հեծնէ, կ'երթայ Բարեկենդանին ետեւէն:

Ճամբան Բարեկենդանը ետ կը նայի, կը տեսնէ ձիաւոր մը կու գայ: Կ'անդրադառնայ, թէ այդ կնոջ ամուսինն է:



Անցորդը կը նրկատէ, որ կնոջ խելքը քիչ մը պակաս է, կը մտածէ «այո» ըսեմ, տեսնեմ ի՞նչ պիտի պատահի:

- Այո, քոյրիկ, ես եմ Բարեկենդանը: Ի՞նչ ունիս ըսելիք:





Ձիաւորը կու գայ, կը հասնի Բարեկենդանին:

- Բարի օր, եղբայր:
- Աստուծոյ բարին:
- Այս ճամբով մարդու մը անցնիրը տեսա՞ր:
- Տեսա՞յ:
- Կոնակը ի՞նչ կար բեռցուած:
- Իւր եւ բրինձ:
- Հա՛, իմ փնտուածս է: Ո՞րքան եղաւ:
- Բաւական ժամանակ անցաւ:
- Ձիս որ քչեմ՝ կը հասնի՞մ:
- Ուրկէ՛ ուր: Դուն ձիով, ան հետիտան:



- Ի՞նչ ընես, եթէ կ'ուզես՝ ձիդ քովս ձգէ, դուն ալ անոր պէս քալելով գնա, թերեւս հասնիս:


- Հա՛, այդ լաւ ըսիր: Կ'իջնէ վար, ձին կը ձգէ եւ հետիտան ճամբայ կ'իյնայ: Երբ կը հեռանայ՝ Բարեկենդանին իւրն ու բրինձը կը բեռցնէ ձիուն վրայ, ճամբան կը փոխէ ու կ'երթայ:

Մարդը կը քալէ, կը քալէ, կը տեսնէ չի հասնիր, ետ կը դառնայ: Կու գայ կը տեսնէ՝ ձին ալ չկայ: Կը վերադառնայ տուն:

Նորէն կը սկսին կռուիլ: Մարդը՝ իւր ու բրինձին համար, կինը՝ ձիուն:

Մինչեւ այսօր ալ այդ ու կինը կը շարունակեն կռուիլ: Մարդը կնոջ կ'ըսէ՝ «յիմար», նոյնպէս կինը՝ մարդուն: Իսկ Բարեկենդանը կը լսէ ու կը ծիծաղի:

ԸՆՁՈՒՂՏԸ



ամէնէն հասակաւոր կենդանիներէն: Անոր հասակը կը հասնի 6 մետրի, իսկ կշիռը՝ 950-1300 քլկ-ի: Ան կ'ապրի մինչեւ 25 տարեկան:

Ընձուղտներուն տեսողութիւնը շատ սուր կ'ըլլայ: Անոնք թշնամին կը նկատեն հեռուէն:

Ընձուղտները ոտքի կը քնանան, որպէսզի թշնամին չկարողանայ գիրենք բռնել:

Ընձուղտները խոտակեր են եւ շատ ջուր կը խմեն: Անոնք կրնան մէկ անգամէն 15 լիթր ջուր խմել եւ օրուան մը ընթացքին 60 քլկ խոտ ուտել:

Ընձուղտները ընդհանրապէս կ'ապրին հարաւային Աֆրիկէ: Մենք գանոնք խումբերով կը տեսնենք:



ՀԱՆՏԵԼՈՒԿ

Ո՞վ է, ի՞նչ է: Երկու ճամբորդ են, մէկ ոտքով կ'երթան: Ո՛չ դադար կ'առնեն, ո՛չ ալ կը քնանան:

(Պատասխանը՝ յաջորդիլ: Նախորդ հանելուկին պատասխանն էր Այսօր):

Ընձուղտը կը պատկանի ստնաւոր կենդանիներու շարքին: Ան կը նկատուի

ՀՈՐԻՉՈՆԱԿԱՆ


1. «Էն.Պի.էյ»ի կազմերէն (երկու բառ):
2. Յեծ, քաջահաւ - Արական անուն:
3. Անձնական դերանուն - Իգական օտար անուն - Կանացի կոչական բառ:
4. Գագաթ - Մանրուժեան միաւոր:
5. Դափնեկիր կամ համալսարանաւարտ - Խաղացած պաշտօն:
6. Սեւ ծովու նաւահանգիստներէն - Շաղկապ - Փոքրացնող մասնիկ:
7. Այրուբենէն - Հայկական աղօթագիրք:
8. «Յորմիւլա 1»ի ամերիկացի մրցավարորդ:
9. Գնչուներու սայլ - Կտիկ - Գրքոյկ:
10. Ժխտական մասնիկ - Ասմազուն:
11. Ամէնէն առաջ - Դրկից տառեր - Եգիպտահայ օրաթերթ:
12. Արդարօրէն վայելել - Աքաղաղի կատար:
13. Թեւեւակ - Հայ անզուգական աշուղ:
14. Որձ որսաշուն - Հոռմէական դիցուհի:
15. Հետք - Փակցնող նիւթ - Յիշատակէ՛:
16. Տարուան եղանակներէն մէկուն վերաբերեալ - Ասիական երկիր:
17. Կրկին - Ռամկօրէն՝ այո՛ - Նուաստ:
18. Ուրիշ - Բանաստեղծ Ջահրատի ստեղծած գլխաւոր կերպարը:
19. Յուցական ածական - Լաւիտ - Ֆրանսացի նախկին թենիսմէն՝ Եանիք:
20. Չեյրի մարզիկներէն - Ելեկտրականութեան միաւոր - Ժամանակի միաւոր:

ՈՒՂՂԱՀԱՅԵԱՑ

1. Ճատրակի աշխարհի 2007ի ախոյեանը:
2. Զբամուած մեղր - Վախկոտ - Կրկնուած բաղաձայններ - Շարունակ:
3. Սոյլ, շէրեն - Ականջ ծակող ոճով խօսիլ:
4. Մերոպ Մաշտոցի թաղման վայրը - Ճիճեղ - Կրկնուած բաղաձայններ:
5. Աստուածային - Հայ թագաւոր:
6. Չայնանիշ - Ռուսերէն՝ այո՛ - Նախահայկական պետութիւն (հակ.) - Յուցական ածական:
7. Հիւանդոտ - Փաստաբան, ջատագով - Դիմումնագիր:
8. Հմտութիւն, ճարտարութիւն - Բուլի ձայն - Չայնանիշ:
9. Փեսային քոյրը՝ հարսին նկատմամբ - Մոլի - Իտալաբնակ ցեղ:
10. Ոգելից ըմպելի - Մեղմիջ խօսք - Խաղողի կոտ:
11. Չեռքի մաս - Երկնատուր - Ճափոնական դասական թատրոն:
12. Եւրոպական ընդլայնակեայ գինեալ կազմակերպութիւն մը - Յոյն աշխարհագէտ եւ պատմագիր - Մաղիամի թագաւորներէն:
13. Արտայայտումի կերպ (հակ.) - Ոչխար - Ռուս թենիսվոլմըն (մականունը եւ անունը):
14. Ինքնաբոյս - Տարիք (հակ.) - Նախահօր կողակիցը - Սկունդ:
15. Բուրդ - Զիաքուռակ - Որ - Ցանցառ:

1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20



ԹԻԻ 164 ԽԱՉԲԱՌԻՆ ԼՈՒԾՈՒՄԸ





ԼԻԲԱՆԱՆԻ ԽՄԲԱՅԻՆ ԱՆՈՅԵԱՆ Հ.Մ.Ը.Մ.Ի ՀԵԾԵԼԱՐՇԱԽԻ ԽՈՒՄԲԸ